


# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

3  
2008

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

* ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ	3
Եվրոպական սահմանադրական դատարանների XIV վեհաժողովի հարցադր և պատասխաններ	

## II. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

### ԵՐԻՏԱՍՄԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄՔԻՐՆ

* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՍՏԱԿՐԴ - ՀՐԻԳՈՐՅԱՆ	56
---	----

## III. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (729 - 733)

* ՍԴՈ-729. 2007 թՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՐՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	67
--	----

* ՍԴՈ-730. 2005 թՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՆ 16-ԻՆ ՎԱՐՃԱՎԱՅՅՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՆՁՎՈՐ ՃԱՆԱՊԱՀՈՎ ՍԱՏՎԱԿԱՆ ԵԿԱՍՏՈՒՆՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ, ՀԵՏԱԽՈԴՄԱՆ, ԱՌԴՐԱՎՈՒՄՆ ՈՒ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՍԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (Կի՞ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	70
---	----

* ՍԴՈ-731. «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (19 ՆՈՅԵMBERԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ, ՀՕ-519-Ն) 47 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՍԱՍԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	78
---	----

* ՍԴՈ-732. 2007 թՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԲՈՒ ԴԱԲԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ԱՐՓԱ-ՄԵՎԱՆ ԹՈՒՆԵԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍԱՎԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	86
---	----

* ՍԴՈ-733. ՔԱՂԱՔԱՅԻ ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2006 թՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՆ 13-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՁՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 2004 թՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՁԻ 115 ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	89
---	----

* ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ	107
-----------------	-----

## IV. ՏԵՂԵԿԱՏՈՒԹՅՈՒՆ

* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	110
-------------------------------	-----

## ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ<sup>1</sup>

Եվրոպական սահմանադրական դատարանների  
կոնֆերանսի XIV վեհաժողովի  
Հարցաշար եւ պատասխաններ

### 1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

#### 1.1. Իրավունքի բացի հասկացությունը

- Համառոր ներկայացրեք, թե ինչպիսի՞ն է Ձեր երկրի իրավունքի բնագավառի զիգնականների և մասնագելների գուսակելու իրավունքի բացի վերաբերյալ (ինչպես է սահմանվում իրավունքի բացի հասկացությունը)

Իրավունքի բացն իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հաճախանքների վերաբերյալ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է, ինչպես նաև իրավական կարգավորման անորոշությունը:

Իրավունքի բացերը պետք է տարբերել սոցիալական ոլորտի ամբողջովին չկարգավորվածությունից, որը կարող է վերացվել միայն իրավաստեղծ գործունեության միջոցով:

Այսպիսով, իրավունքի բացը ոչ լրիվ իրավական կարգավորումն է և իրավական կարգավիրման անորոշությունը: Վերջինս կարող է հանդիսանալ ոչ միայն հասարակական հարաբերությունների ոչ լրիվ կարգավորվածության արդյունք, այլ նաև նորմատիվ պատվիրանների բովանդակության անորոշության արդյունք:

<sup>1</sup> «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունը, որի լիիրավ անդամ է ՀՀ սահմանադրական դատարանը, 2008թ. հունիսին իրավիրվող 14-րդ վեհաժողովում քննարկելու է «Օրենսդրական բացերի հիմնախմնդիրը սահմանադրական արդարադատության պրակտիկայում» հիմնահարցը: Այս թեմայի վերաբերյալ մինչեւ 2007թ. հոկտեմբերի 1-ը բոլոր երկնմերը ներկայացրել են իրենց ազգային գեկույցները, որոնք հիմք են հանդիսանալու ընդհանուր քննարկում կազմակերպելու և ելույթների համար: Ազգային գեկույցը ներկայացվում է նախագահող երկրի սահմանադրական դատարանի կողմից մշակված հարցաշարի հիման վրա: Ստորեւ ներկայացնում ենք ՀՀ սահմանադրական դատարանի կողմից պատրաստված նյութը, որը հետաքրքրություն կարող է ներկայացնել նաև գիտական վերլուծությունների, օրինաստեղծ գործունեության, իրավակիրառական պրակտիկայի համար (նյութը լրացված է՝ հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. պրակտիկան):

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

**- Իրավունքի բացերի ինչպիսի՝ գրեսակներ են առանձնացվում (օրինակ՝ իրավական կարգավորման անորոշություն, *Lacuna legis*, իրավական վակուում, օրենսդրական բաց և այլն)**

Հայրենական իրավագիտության մեջ առանձնացվում են իրավունքի բացերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են իրավական անորոշությունը, օրենսդրական բացը և որոշ դեպքերում՝ իրավունքի սխալը։ Վերջինս դրսորդվում է այն դեպքերում, երբ նորմաստեղծ մարմինը՝ ա) սխալմամբ ինչ-ինչ հարաբերություններ դիտում է որպես իրավաբանական ազդեցությանը ոչ ենթակա, բ) սխալմամբ իրավունքի կոնկրետացումը հնարավոր է համարում իրավունքի կիրառման ընթացքում, գ) սխալմամբ հարցի լուծումը վերապահում է իրավակիրառողի հայեցողությանը։

ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկան վկայում է, որ իրավունքի բացն ավելի հաճախ դրսեւորվում է իրավական անորոշության ձեւով։ Վերջինս հիմնականում հանդիսանում է իրավակիրառական, մասնավորապես, դատական պրակտիկայում, իրավական դրույթների՝ Սահմանադրությանը ոչ համահունչ մեկնաբանության արդյունք։ Ընդ որում, իրավակիրառական պրակտիկայում իրավական դրույթների՝ Սահմանադրությանը ոչ համահունչ մեկնաբանության արդյունքում ձեւավորված իրավական անորոշության դեպքում գործ ունենք, այսպես կոչված, վերատադրվող բացի հետ, քանզի նման մեկնաբանությունը չի կարող ուղղակիորեն դառնալ սահմանադրական վերահսկողության օբյեկտ։ Նման վերաբարդվող բացը վերացնելու նպատակով ՀՀ սահմանադրական դատարանը, նորմաստիվ ակտերի սահմանադրականության հարցը լուծելիս, իր պրակտիկայում կիրառում է հետեւյալ իրավական միջոցը. վիճարկվող նորմը ճանաչում է հակասահմանադրական՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ։ Օրինակ, իր 16 նոյեմբերի 2006թ. ՍԴ- 665 որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանն ամրագրել է հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»։

**- Գիրուրյան մեջ հետազոտվու՞մ են, արդյոք, իրավունքի բացերի առաջացման պատճառները**

Այս, հետազոտվում են: Տեսության համաձայն՝ իրավունքի բացերի

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

առաջացման պատճառների տեսանկյունից բացը կարող է լինել սկզբնական և հետագա:

Սկզբնականն առկա է այն դեպքում, երբ իրավական կարգավորում պահանջող հանգամանքներն արդեն իսկ գոյություն են ունեցել, սակայն օրենսդիրը դրանք բաց է բողեւ, չի ընդգրկել նորմատիվ իրավական ակտի ձևակերպումներում:

Հետագա բացը կարգավորվող սոցիալական ոլորտի զարգացման արդյունքում իրավական կարգավորման առարկայում նոր հարաբերությունների առաջացման հետևանք է, այսինքն՝ այն ոլորտի, որի վրա օրենսդիրը, ընդհանուր առմանք, արդեն իսկ տարածել է իր կամքը: Այսպիսով, ինչոր իմաստով օրենսդրության մեջ հետագա բացերի առաջացումն օրինաշափ երևույթ է, թեկուզն այդպիսի իրավիճակներում պետք է լիովին դրսորվի իրավական կանխատեսումը:

Տեսության մեջ բերվում են իրավունքի բացի առաջացման տարբեր պատճառներ: Օրինակ.

ա) իրավական ակտը սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական է ճանաչվել, սակայն իրավասու իրավաստեղծ մարմինը չի գործում բավարար օպերատիվությամբ, այն է՝ ողջամիտ ժամկետում միջոցներ չի ձեռնարկում հակասահմանադրական ճանաչված իրավական ակտով կարգավորված իրավահարաբերությունները կանոնակարգող նոր ակտ ընդունելու համար,

բ) երբ օրենսդրությունը կյանքից հետ է մնում՝ նոր հասարակական հարաբերությունների ծագման արդյունքում,

գ) երբ ընթացիկ օրենսդրությունը հետ է մնում սահմանադրական կարգավորումից. իրավունքի բացի առաջացման այս պատճառը ներկայումս խիստ արդիական է մեր հանրապետությունում՝ փոփոխված Սահմանադրության լույսի ներքո: 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով փոփոխված ՀՀ Սահմանադրության հոդված 117-ի համաձայն՝ Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում պետք է գործող օրենքները համապատասխանեցնի Սահմանադրության փոփոխություններին: Սահմանադրությամբ սահմանված ժամկետը գոեթե լրանում է, սակայն ՀՀ ընթացիկ օրենսդրության՝ Սահմանադրության փոփոխություններին համապատասխանեցումն ապահովված է գրեթե 10 %-ով: Այսինքն՝ ընթացիկ օրենսդրությունը սահմանադրական կարգավորումից հետ է մնում մոտ 90%-ով,

դ) երբ իրավակիրառական, մասնավորապես՝ դատական, պրակտիկայում իրավական դրույթներին տրվում է Սահմանադրությանը ոչ համահունչ մեկնաբանություն: ՀՀ ընթացիկ օրենսդրության՝ իրավական դրույթների նման մեկնաբանությունն է առիթ հանդիսացել

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

քաղաքացու՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված այն դիմումի համար, որով վիճարկել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի սահմանադրականությունը: Վերջինս դատարանների կողմից կիրառվել էր այնպիսի մեկնաբանությամբ, որ, ըստ դիմումի, անձանց գրկել է ՀՀ Ազգային ժողովի որոշումների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ օրենքին համապատասխանությունը վիճարկելու հնարավորությունից: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող դրույթի ձեռակերպումը եւ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը խոչընդոտում են իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավունքների իրականացումը՝ դատական կարգով բողոքարկելու որոշակի ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցը, որի հետեւանքով վտանգվում է արդարադատության մի ամբողջ ինստիտուտ:

2007թ. սեպտեմբերին սահմանադրական դատարանը քննության է ընդունել ես մեկ դիմում, որում վիճարկվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի ամբողջ գլխի՝ 26-րդ գլխի դրույթները: Այդ գլխի դրույթները վերաբերում են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց անգործությունը, գործողությունները եւ ակտերը վիճարկելուն: Համաձայն ընդհանուր իրավասության դատարանների կողմից այդ գլխի դրույթներին տրված մեկնաբանության՝ դրանք կիրառելի չեն դատավորի եւ դատարանի դրսեւրած անգործության եւ գործողությունների վիճարկման նկատմամբ, եւ քաղաքացին չի կարող դրանց հիման վրա, ի թիվս այլ պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց, վիճարկել նաև դատավորի կամ դատարանի անգործությունը կամ գործողությունը: Ըստ դիմողի՝ դատական պրակտիկայում՝ վիճարկվող գլխի դրույթների նման մեկնաբանության արդյունքում ինքը գրկել է ընդդեմ դատավորի անգործության դատական պաշտպանության իրավունքից:

2007թ. նոյեմբերի 28-ի իր ՍԴ-719 որոշմամբ սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ գլխի դրույթները ճանաչեց ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ գտնելով, որ օրենսգրքի ամբողջ 26-րդ գլուխը նվիրված է միայն ոչ արդարադատական գործառույթներ իրականացնող մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց գործունեության օրինականության նկատմամբ դատական վերահսկողությանը: Դատական ակտերի, դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) նկատմամբ բողոքարկման այն նույն կարգի կիրառումը, որը գործում է այլ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց ակտերը վիճարկելու համար, կդանդաղեց-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՐՆԵՐ

Ահ դատական քննության գործընթացը՝ դրանով ստեղծելով դատաքննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու՝ արդարադատության իրականացման երաշխիքի խախտման վտանգ։ Դատական իշխանության ներսում դատարանների եւ դրանց պաշտոնատար անձանց ակտերի բողոքարկումը պետք է իրականացվի հատուկ դատավարական կարգով՝ այն հաշվով, որ վերջինս չխոչընդոտի դատաքննության բնականոն ընթացքը, չվտանգի դրա արդյունավետությունը։

Սահմանադրական դատարանը միաժամանակ անդրադառնալով դիմողի մատնանշած՝ դատարանների կողմից՝ իրենց ուղղված դիմումների հանդեպ անգործություն ցուցաբերելու փաստերին, արձանագրել է, որ նման մոտեցումը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը։ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ ամրագրել է, որ օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու դատարանների անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ։ Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու եւ երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը։

Նկատի ունենալով, որ դատական իշխանության համակարգում արդարադատական գործընթացի բոլոր փուլերն օրենքով կանոնակարգված են, որոշակիացված են բողոքարկման ընթացակարգերը, նախատեսված են դատական իշխանության բնականոն գործունեության որոշակի երաշխիքներ, այսուհանդերձ, սահմանադրական դատարանը գտել է, որ դատական իշխանության պաշտոնատար անձանց անգործության վերացման արդյունավետ ձեւերի հարցն օրենսդրական լրացուցիչ կանոնակարգման խնդիր ունի։

ՀՀ Ազգային ժողովն առավել հստակ պետք է սահմանի դատարանների, նրանց պաշտոնատար անձանց անգործության հետեւանրով անձի խախտված իրավունքները դատավարական ողջամիտ ժամկետում վերականգնելու եւ պատճառված վճարը փոխհատուցելու արդյունավետ ընթացակարգեր, որոնց բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել նաև արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի իմաստից։

ե) երբ նորմաստեղծ մարմինը սխալմամբ իմշ-իմշ հարաբերություններ դիտում է որպես իրավաբանական ազդեցությանը ոչ ենթակա,

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

- գ) երբ նորմաստեղծ մարմինը սխալմամբ իրավունքի կոնկրետացումը հնարավոր է համարում իրավունքի կիրառման ընթացքում,
- է) երբ նորմաստեղծ մարմինը սխալմամբ հարցի լուծումը վերապահում է իրավակիրառողի հայեցողությանը,
- ը) երբ առկա են միատեսակ ուժ ունեցող նորմերի արմատական հակասություններ, որոնց դեպքում դրանցից մեկը «ոչնչացնում է» մյուսին,
- թ) իրավական նորմերի հիպոթեզների ընդհանուր բնույթը,
- Ժ) կառավարչական հարաբերությունների շարժունակությունը,
- ի) նոր փաստերի ի հայտ գալու հնարավորությունը,
- լ) երբ նոր օրենք ընդունելիս միաժամանակ դրանից բխող անհրաժեշտ փոփոխություններ չեն կատարվում ավելի վաղ ընդունված օրենքներում:

### **- Գիրուրյան մեջ հետազողվու՞մ է, արդյոք, իրավունքի իսկական և բվացյալ բացերի հիմնախնդիրը**

Այս, հետազոտվում է այն տեսանկյունից, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս անհրաժեշտ է իրավունքի բացը սահմանագատել իրավունքի բացայալ բացերից, իրավական վակուումից, օրենսդրի որակյալ լուրջունից:

### **- Գիրուրյան մեջ հետազողվու՞մ են, արդյոք, հանրային և մասնավոր իրավունքի բացերի առանձնահարկությունները**

Իրավունքի բացերի վերաբերյալ գիտական հետազոտություններում տարբերակում կատարված չէ հանրային և մասնավոր իրավունքի բացերի միջև, հետևաբար՝ նաև հստակեցված չեն դրանց առանձնահատկությունները:

### **- Գիրուրյան մեջ հետազողվու՞մ են, արդյոք, իրավունքի բացերի դրական և բացասական հեղինակները**

Իրավունքի բացերի վերաբերյալ գիտական հետազոտություններում իրավունքի բացի բացասական հետեւանքների առնչությամբ առավել հաճախ քննարկվող հիմնախնդիրը վերաբերում է իրավունքի բացի հաղթահարմանը: Ըստ տեսաբանների՝ իրավական համակարգը պետք է լինի այնպիսին, որ դրանում առկա իրավունքի բացերը չլինեն անհաղթահարելի ու վերաբերաբար եւ չտանեն դեպի փակուղի:

Տեսական գրականության մեջ որպես իրավունքի բացերի դրական հետեւանք է մատնանշվում այն, որ դատական մարմինները, հանդես գալով նեգատիվ օրենսդրի դերում եւ իրավունքի բացը հաղթահարելով մեկնա-

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

բանության միջոցով, ավելի դինամիկ կերպով են արձագանքում իրավահարաբերությունների կարգավորմանը՝ նպաստելով իրավակարգավորման զարգացմանը եւ ուղղորդելով իրավաստեղծ գործունեությունը:

### **1.2. Օրենսդրական բացի հասկացությունը**

**- Գիրական գրականության մեջ առանձնացվու մ են, արդյոք, Սահմանադրությամբ (կամ իրավական կարգավորման բարձրագույն մակարդակի ակտերով) արգելված իրավունքի բացերը**

Գիտական գրականության մեջ իրավունքի բացն ուղղակիորեն չի առանձնացվում Սահմանադրությամբ արգելված իրավունքի բացերից: Սակայն ՀՀ սահմանադրական դատարանի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունից բխում է, որ քննության առնված տարբեր գործերով արտահայտված իրավական դիրքորոշումներում սահմանադրական դատարանը տվյալ դեպքում հայտնաբերված իրավունքի բացը դասել է Սահմանադրությամբ արգելված իրավունքի բացերի շարքին: Սամափորապես՝

ա) սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«...Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե հանրային կարիքների համար սեփականության հարկադիր օտարում է տեղի ունենում՝ առանց օրենսդրության հստակ սահմանելու եւ գործնականում հաշվի առնելու օտարման սահմանափակումների վերաբերյալ սահմանադրական պահանջները, ապա դա կինդի անհամանան միջամտություն սեփականության իրավունքին:

**...Սահմանադրությունն ուղղակի պահանջ է առաջադրում, որ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը սահմանվի օրենքով: Ընդ որում, այդ կարգը չի կարող անտեսել սեփականության իրավունքի պաշտպանության այն բոլոր երաշխիքները, որոնք նախատեսված են 31 հոդվածում:**

Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համակարգային եերլուծությունը վկայում է, որ այդ խնդիրը դեռևս հստակ ու պատշաճ ձեւով լուծված չէ:

**Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունը, Սահմանադրության 3, 5, 8, 31, 43, 83.5. հոդվածների պահանջներից ելնելով, աեսոր է օրենքով հստակ սահմանի հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը:**

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՈՆԵՐ

... Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման օրենսդրութեն կարգավորումը պետք է պարտադիր կարգով հիմքում ուժենա այն ելակետային դրույթը, որ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել միայն Սահմանադրության 31 հոդվածով նախատեսված դեպքերում՝ երաշխավորելով սահմանադրական հետեւյալ պահանջների կատարումը.

ա) հասարակության եւ պետական կարիքների առկայության հիմնավորման պահանջի,

բ) բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայության եւ դրա հիմնավորման պահանջի,

գ) գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակական եւ պետական կարիքի եւ անհատի սեփականության իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռության ապահովման պահանջի: Վերջինս ենթադրում է նաև սեփականության իր իրավունքին միջամտելու վերաբերյալ անձի պատշաճ եւ հիմնավոր տեղեկացվածություն եւ տարբեր շահերի համադրման համատեքստում իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորություն:

Օրենքը պետք է սահմանի հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը, որոշակիացնելով.

ա) օտարելու մասին որոշում կայացնող պետական մարմինը,

բ) օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք (քննելեն եւ/կամ դրամական) փոխհատուցման ապահովման կարգը,

գ) գույքի օտարելու մասին որոշման բողոքարկման, ինչպես նաև հատուցման զնի, ժամկետների, այլ համարժեք փոխհատուցում տալու եւ դրանց հետ կապված մյուս պայմանների շորջ համաձայնության շգալու դեպքում գույքի օտարման կարգը,

դ) օտարվող գույքի սեփականատիրոջ իրավունքները, պարտականությունները, իրավունքի սահմանափակումները,

ե) հարկադիր օտարումից հետո սեփականության նոր իրավունքի ծագման եւ իրավական ձեւակերպման կարգը,

զ) իրավաչափ նպատակի համար սեփականության տարբեր օբյեկտների օտարման առանձնահատկությունները եւ այլն:

Եթե սեփականությունն օտարվում է հասարակության կարիքների համար, անկախ նրանից, թե ինչ սուրյեկտի է (պետություն, համայնք, ֆիզիկական կամ իրավաբանական անձ) հետազայում օրենքով սահմանված կարգով անցնում գույքը, օրենքը պետք է սահմանի այնպիսի կարգավորում, որը երաշխավորի տվյալ գույքի օգտագործումը հասարակության այն կարիքների համար, որի հիմնավորմամբ կատարվել է օտարումը:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Օրենքը միաժամանակ պետք է նախատեսի, որ սեփականատիրոջ եւ պետության (ի դեմս նրա լիազոր մարմնի) միջեւ կնքվում է գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման եւ համարժեք փոխհատուցման պայմանագիր, որում պետք է հստակ շարադրված լինեն վերոհիշյալ պահանջներից բխող երկկողմ պարտավորությունները, ինչպես նաև այն պայմանը, որ նման պայմանագրով տրված փոխհատուցումը չի կարող դիտվել որպես հարկվող եկամուտ:

... Օրենքը պետք է սահմանի, թե ինչպես որոշել հասարակական եւ պետական կարիքը, ինչպես է հիմնավորվում, որ դրա՝ համարժեք փոխհատուցմամբ բավարարումը թելադրված է բացառիկ՝ գերակա հանրային շահով, ինչ կարգով այդ հիմնավորման մասին տեղեկացնել սեփականության իրավունքը կրողին, ինչպես վերջինս կարող է Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով նախատեսված իր իրավունքների շրջանակներում դատական կարգով բողոքարկել ներկայացրած հիմնավորումը, եթե գտնում է, որ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտությունը չի ապահովում «արդարացի հավասարակշռություն» հասարակության շահերի եւ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջեւ:

Տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը ...»:

2006 թվականի նոյեմբերի 16-ի U-Ն-665 որոշման մեջ սահմանադրական դատարանը, ՀՀ քաղ. օր.-ի 14 եւ 15 հոդվածների համապատասխան դրույթների եւ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի բովանդակության համեմատական վերլուծության արդյունքում գտել է, որ օրենսդիրը փորձելով ՀՀ քաղ. օր.-ի 14 եւ 15 հոդվածներում նշված դրույթների պահանջներին համարժեք ձեւավորել դրանց դատավարական լուծման ընթացակարգը, ստեղծել է, սակայն, այնպիսի իրավիճակ, եթե դատավարական իրավունքի նորմն արգելք է դարձել նյութական իրավունքի նորմի իրականացմանը: Օրենսդիրը՝ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի առաջին մասում ամրագրելով քաղաքացիական եւ տնտեսական գործեր քննող դատարանների պարտավորությունը՝ ընդունել եւ քննել պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտո-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

նատար անձանց՝ օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու մասին դիմումը, երկրորդ պարբերությամբ առանձնացնում է իրավական ակտերի խումբ, որոնց՝ օրենքին համապատասխանության հարցի քննությունը գործնականում դուրս է բերվել դատական վերահսկողության ոլորտից:

ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունն այն մասին, որ «Դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը, սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է», ձեւակերպված է իրավաբանորեն ոչ հստակ: Ինչպես վկայում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի եւ վճռաբեկ դատարանների կայացրած որոշումների ուսումնափրությունը, այդ դատական ատյանները ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունում տեղ գտած ձեւակերպումը մեկնաբանել են առանց հաշվի առնելու ՀՀ քաղ. օր.-ի 14 եւ 15 հոդվածների եւ ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի պահանջները: Եթե ընդհանուր իրավասության դատարանները փորձել են ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության դիսպոզիցիան գուգորդել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի բովանդակության հետ, ապա ակնհայտ է, որ սահմանադրական այդ նորմը չի պարունակում այնպիսի դրույթ, որը կարող էր հիմք ծառայել քաղաքցու դիմումը մերժելու համար: Նման մերժումը կարող էր արդարացվել միայն այն դեպքում, եթե Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին վերապահված լիներ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունում վկայակոչվող իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի որոշման իրավասությունը, ինչն առկա է շատ երկրներում: Սակայն ՀՀ օրենսդրությունն այդ իրավասությունը վերապահել է ընդհանուր իրավասության դատարաններին: Հետևաբար, դատավարական նորմերը դատարանների լիազորությունների իրացման երաշխիք պետք է ապահովեն, այլ ոչ թե խոչընդոտեն դրանց իրականացմանը՝ ստեղծելով իրավական վակուում:

Քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 2-րդ պարբերության՝ նման ձեւակերպմամբ առկայությունը եւ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը խոչընդոտում են իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավունքների իրականացումը՝ դատական կարգով բողոքարկելու որոշակի ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցը, որի հետեւանքով վտանգվում է արդարադատության մի ամբողջ ինստիտուտ:

**ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության բովանդակության**

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

նման ձեւակերպումը, ինչպես նաև դրա կիրառման վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանների առկա դիրքորոշումը չեն երաշխավորում իշխանությունների հավասարակշռումը, լուրջ բաց են առաջացրել իրավական ակտերի դատական վերահսկողության առումով եւ վտանգում են ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված՝ անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Ըստ սահմանադրական դատարանի գնահատականի՝ իրավական պետությանն անհարիր է այն իրավիճակը, եթե օրենքով ու իրավակիրառական պրակտիկայի կողմից բացառվում են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի դատական վերահսկողությունը:

Սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն վճռաբեկ բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլև բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Գրա բացակայության հետեւանք է, որ գործով ուսումնասիրված՝ վճռաբեկ դատարանի թե՛ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու եւ թե՛ վերադարձնելու մասին որոշումներում ըստ Էության չեն տրվում պատճառաբանություններ:»

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի վիճարկվող 3-րդ կետում կիրառված «թերություններ» արտահայտության հստակ ըմբռնելի բովանդակությունը սահմանելը, բողոքատու անձանց կողմից վճռաբեկ բողոքն օրենսգրքի 230 հոդվածի պահանջներին ըստ ձեւի համապատասխանեցնելու պայմանները, կարգը եւ ժամկետն օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա վճռաբեկ վարույթում առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը»:

Սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը՝ 10-օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության եւ իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ բողոքը

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարեւոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: **Հետեւաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:**

Նույնական մոտեցում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվել սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ- 691 որոշմամբ:

**- Գիրուրյան մեջ օրենսդրական բացի որպես իրավունքի բացի որեւէսկի, ինչպի՞սի հասկացություն է գերիշխում**

Հայրենական իրավագիտության մեջ «օրենսդրական բաց» հասկացությունն առավել հաճախ գործածվում է հետեւյալ բովանդակությամբ. «Օրենսդրական բացը իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է»:

**1.3. Սահմանադրական դատարանի կամ սահմանադրական վերահսկողություն իրականացնող համապատասխան ինստիտուտի (այսուհետ հարցաշարում՝ սահմանադրական դատարան)` որպես «նեզատիվ» և «պողիտիվ» օրենսդրի հայեցակարգը**

**- Ձեր երկրի գիրուրյան մեջ սահմանադրական դատարանի՝ որպես դատական մարմնի, նշանակուրյան ինչպի՞սի հասկացություն է գերիշխում: Սահմանադրական դատարանը որպես «նեզարիլ օրենսդիր»**

Սեր երկրի գիտության մեջ գերիշխում է սահմանադրական դատարանի՝ որպես «նեզատիվ օրենսդրի» հասկացությունը: Այսպես.

ա) հետագա վերացական եւ կոնկրետ վերահսկողություն իրականացնելիս օրինաստեղծմանը ՀՀ սահմանադրական դատարանի մասնակցությունը դրսեւրփում է նրանում, որ ՀՀ սահմանադրական դատարանն օրենքը կամ դրա առանձին դրույթը ճանաչում է Սահմանադրությանը չհամապատասխանող, ինչը նշանակում է դրա իրավաբանական ուժի կորուստ, ինքնարերաբար հանում իրավական դաշտից,

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

թ) նորմատիվ իրավական ակտը ճանաչելով Սահմանադրությանը շամապատասխանող՝ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված դեպքում կարող է որոշել, թե երբ է նորմատիվ ակտը կորցնում իրավարանական ուժը, այսինքն՝ դադարեցնում իր գործողությունը: Այս իմաստով ևս սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես նեգատիվ իրավաստեղծ մարմին,

զ) սահմանադրական դատարանի՝ որպես նեգատիվ օրենսդրի որոշումները հանդիսանում են իրավունքի աղբյուր՝ կանխորշելով օրենսդրական զարգացումները: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը պահանջում է, որ երկրի օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքները շիակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին:

Հարկ է ընդգծել, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հանդիսանում են ոչ միայն ընդհանրապես իրավունքի աղբյուր, այլ նաև՝ սահմանադրական իրավունքի աղբյուր: Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ուղղորդեցին նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունները: Նշենք մեկ օրինակ. այդ իրավական դիրքորոշումները հանգեցրին նրան, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրվեց իրավունքի գերակայության սկզբունքը՝ օրենքի գերակայության սկզբունքի փոխարեն:

### **- Սահմանադրական դատարանի՝ որպես «պողիսիլ օրենսդրի» հայեցակարգը**

Սահմանադրական դատարանի՝ որպես «պողիսիլ օրենսդրի» հայեցակարգը հետևյալն է՝ օրինաստեղծմանը ՀՀ սահմանադրական դատարանի մասնակցության ուղղություններից մեկն ակտիվ օժանդակությունն է ՀՀ Ազգային ժողովին՝ վերջինիս օրենսդրական լիազորությունների առավել ակտիվ եւ նպատակամետ օգտագործման գործում, նրա դրական օրինաստեղծ գործունեությանը: Տարբեր կատեգորիաների գործեր քննելիս՝ ՀՀ սահմանադրական դատարանը դիմում է օրենսդիր մարմնին՝ նոր օրենսդրական կարգավորման վերաբերյալ կոնկրետ հարցադրումներով, մատնացույց անելով, որպես կանոն, այդպիսի կարգավորման բնույթը, առարկան եւ բովանդակությունը /տես, մասնավորապես, վերոշարադրյալ 1.1. կետում ՍԴՈ-719 որոշումը, 1.2. կետում՝ ՍԴՈ-630 որոշումը/: Այլ օրինակներից է, մասնավորապես, ՍԴՈ-700 որոշումը, որում արձանագրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում տեղ գտած անորոշությունն ու դրա դրույթների հակասությունն այլ օրենսդրական ակտերի հետ՝ սահմանադրական դատարանը նշել է, որ «նման իրա-

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՈՆԴԻՐՆԵՐ**

վիճակը կարող է հաղթահարվել օրենսդրական հստակեցումներ կատարելու, իսկ մինչ այդ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի նորմերի մեկնաբանման եւ միասնական իրավակիրառական պրակտիկա ապահովելու ճանապարհով՝ երաշխավորելու համար ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը»:

Օրպես օրինակ կարելի է բերել նաև ՍԴ-678 որոշումը, որում սահմանադրական դատարանը նշում է. «...ՀՀ սահմանադրական փոփոխությունները նոր պահանջներ առաջադրեցին լրատվամիջոցների ազատության ու անկախի գործունեության երաշխավորման համար: Վերջինիս ապահովումը ՀՀ Ազգային ժողովի առջեւ, մասնավորապես, խնդիր է դնում փոխկապվածության մեջ վերանայել եւ Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնել 2000թ. հոկտեմբերի 9-ին ընդունված՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին», 2003թ. դեկտեմբերի 13-ին ընդունված՝ «Զանգվածային լրատվության մասին» օրենքների, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի, ինչպես նաև տվյալ խնդրին առնչվող այլ օրենքների համապատասխան դրույթները: Հիշյալ օրենքների դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան Հանրային հեռուստառադիտընկերություն ստեղծելու իրավական երաշխիքները դեռևս լիարժեք ու ամբողջական չեն: Խնդիրը շտապ համակարգային լուծում է պահանջում, եւ հիմնախնդրին առնչվող որեւէ օրենքի այս կամ այն դրույթի սահմանադրականության զնահատմամբ հարցն ամբողջությամբ չի սպառվում: Մասնավորապես, քննության առարկայի առնչությամբ միջազգային պրակտիկան վկայում է, որ հարցի սկզբունքային լուծման բանաձեւն օրենսդիր մարմնի գործունեության առավելագույն իրապարակայնության ապահովումն է՝ լրատվամիջոցների, այդ թվում հանրային, գործառնական ու կառուցակարգային անկախության երաշխավորման պայմաններում: Ինչ վերաբերում է իրավաչափ ձեւի ընտրությանը, ապա դա օրենսդիր մարմնի խնդիրն է: Բոլոր դեպքերում, միջազգային պրակտիկայում առկա ցանկացած ձեւի ընտրության պարագայում, պետք է իրավական երաշխիքներ ստեղծվեն, որպեսզի հանրային հեռարձակման պրակտիկայում օրենսդիր մարմնի գործունեության լայն իրապարակայնության եւ քաղաքական քազմակարծության ապահովումը չփոխանգիտվեն: Տվյալ խնդրի լուծման ժամանակ, ելնելով նաև ՀՀ միջազգային պարտավորություններից, ՀՀ Ազգային ժողովն առաջին հերթին պետք է առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 27, 83.2 հոդվածների, ինչպես նաև Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (96) 10 հանձնարարականի, դրա բացատրական հուշագրի, Խորհրդարանական վեհաժողովի՝ Հանրային հեռարձակում թիվ 1641 (2004) 1 հանձնարարականի դրույթներով»:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՍԴՈ-652 որոշման մեջ սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատման առնչությամբ նշում է, որ տվյալ դեպքում «քաղաքացու սահմանադրական իրավունքի չափահովման պատճառը ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 290 հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության խնդրով է պայմանավորված, այլ օրենսդրական նորմերի անհատակության եւ իրավակիրառական պրակտիկայի արդյունք է, ուստի նպատակահարմար է համարում սույն գործով իր որոշման պատճառաբանական մասի վրա հրավիրել ՀՀ գլխավոր դատախազության եւ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի ուշադրությունը՝ դիմող կողմից սահմանադրական իրավունքի օրենքով սահմանված կարգով իրացումն ապահովելու նպատակով»:

Սեկ այլ օրինակ է սահմանադրական դատարանի 10 հունիսի 2007թ. ՍԴՈ-703 որոշումը: Սահմանադրական դատարանը գործի քննության արդյունքում բացահայտած օրենսդրական հակասությունների եւ անհստակությունների կապակցությամբ, մասնավորապես, նշել է. «... Չնայած ՀՀ ընտրական օրենսգրքի որոշակի բարեփոխումներին, օրենսգրքում եւ ՀՀ օրենսդրական այլ ակտերում տեղ են գտել այնպիսի անհամապատասխանություններ եւ այլ թերություններ, որոնք խնդիրներ են առաջանում նախընտրական գործընթացների կազմակերպման, ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հարցերում: Օրինակ, ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), բացառությամբ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների, կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան»: Նման նորմը հաշվի է առել բողոքի կարեւորությունը եւ առանձնահատուկ բնույթը, այդ բողոքները կոլեգիալ կարգով քննելու եւ դատարանի ակտի նկատմամբ նաև ավելի մեծ վստահություն ապահովելու անհրաժեշտությունը, քանի որ նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն «Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու մասին դիմումների վերաբերյալ դատարանները վճիռներ կայացնում են սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետներում: Այդ վճիռները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից»: Փաստորեն, ընտրական վեճերը, նաև վերաքննիչ դատարանի միջոցով, պետք է լուծվեն հասուլ հայցային վարույթի կարգով: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վերաքննիչ դատարանի մասով նման հնարավորություն չի նախատեսել, որի արդյունքում հասուլ հայցային վարույթի կարգով վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ ԿԸՀ որոշումները, գործողությունները (անգործությունը) ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված ընթացակարգերով բողոքարկելը հնարավոր չի դարձել»:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՈՆԴԻՐՆԵՐ

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Ազգային ժողովը պետք է վերացնի ոչ միայն նշված օրենսդրական անհամապատասխանությունները, այլև ամրապնդի հատուկ հայցային վարույթի ինստիտուտի իրավական հիմքերը՝ առավել հստակեցնելով նման վարույթի իրականացման կարգն ու առանձնահատկությունները:

Սահմանադրական դատարանը գտել է նաև, որ ՀՀ ընտրական օրենսգրքում անկատար է նաև ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) եւ առաջարկությունների քննարկման կարգը սահմանող 40.1 հոդվածը, որն առավելապես պարունակում է այդ փաստաթղթերին ներկայացվող ձեւական պահանջներ: Մինչեւ, ընտրական գործընթացներն արդյունավետ վերահսկելու, ընտրությունների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու առումով անհրաժեշտ է, որպեսզի օրենսդրական փոփոխությունների արդյունքում հստակ նորմատիվ պահանջ ներկայացվի հատկապես ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) եւ առաջարկությունների ընթացակարգային քննարկմանն ու դրա արդյունքում պատճառաբանված որոշումներ կայացնելուն: **Դա ծանրակշիռ նախադրյալներ կստեղծի այդ հանձնաժողովների պատասխանատվության բարձրացման, անհրաժեշտության դեպքում՝ այդ որոշումների դատական կարգով վիճարկման, իսկ ընտրությունների արդյունքներով պայմանավորված գործընթացներում՝ նաև անձանց սահմանադրական իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու ուղղությամբ:**

Սահմանադրական դատարանը, 2008թ. ապրիլի 15-ի իր ՍԴ-751 որոշման մեջ արձանագրելով նոր հանգամանքներով վճիռների եւ որոշումների վերանայման օրենսդրական կարգավորման կատարելագործման անհրաժեշտությունը, նշել է. «...սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Հետեւարար, օրենսդիրը պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.2 բաժնում սահմանել նոր հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի հստակ իրավակարգավորում, որը կերաշխավորի անձի՝ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

կետով ամրագրված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 19 հոդվածում ամրագրված իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը։ Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատարական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերի ուժով։ Այլապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատարական պաշտպանության իրավունքը կդառնան անհրական եւ երեւութական՝ զուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից»։

**- Իրավասպեղծման վրա սահմանադրական դատարանի պրակտիկայի ազդեցության հիմնախնդիրները։ Գիրուրյան մեջ քննարկվում է, արդյոք, իրավունքի բացերի հետազոտման և գնահատման առումով սահմանադրական դատարանի գործունեությունը, ինչպես նաև իրավունքի բացերի լրացման վրա սահմանադրական դատարանի որոշումների ազդեցություննը**

Այս: Մասնավորապես գիտության մեջ արտահայտվել է տեսակետ, համաձայն որի՝ օրենքի ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովման գործում բացառիկ կարեւորություն է ներկայացնում սահմանադրական արդարադատության մարմինների կողմից ընդունվող որոշումների կատարման եւ դատարանի իրավական դիրքորոշումը որպես իրավունքի աղբյուր հաշվի առնելու խնդիրը։ Այս հարցին պետք է ցուցաբերել տարրերակած մոտեցում՝ ըստ իրավական ակտի տեսակի եւ ըստ վերահսկողության ձեւի սահմանելով որոշման իրավական հետեւանքների ու դրա իրացման ամբողջական մեխանիզմ։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է իրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ։ Այն ուղարկվում է պետական եւ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին։

Առանձին դեպքերում սահմանադրական դատարանի որոշումները սխալ կամ ոչ լիարժեք են ընկալվում ու կատարվում իրավաստեղծ եւ իրավակիրառ սուբյեկտների կողմից, ինչը թույլ չի տալիս սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա հետեւողականորեն վերացնել իրա-

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

վունքի բացերը: Ուստի նման պայմաններում վերոհիշյալ տարեկան հաղորդումը, որում մանրամասն վերլուծվում է երկրում սահմանադրական իրավահարաբերությունների վիճակը, լուրջ եւ կարեւոր իրավական միջոց է հանդիսանում իրավունքի բացերի լրացման գործում սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք ազդեցության ապահովման համար:

**- Այդպիսի որոշումների հիման վրա գնահավակնել է, արդյոք, սահմանադրական դատարանի գործունեությունը որպես «ակդիվիզմ», «չսպավորություն», «մինիմալիզմ»**

Սույն գեկույցում մատնանշված որոշումների հիման վրա՝ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությունը կարելի է գնահատել որպես «ակտիվ» գործունեություն:

## **2. ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ, ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՆՁՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

### **2.1. Սահմանադրությունն ազգային իրավունքի համակարգում**

**- Ներկայացրեք ազգային իրավունքի ակդրերի ասդիմանակարգության բուրգի մոդելը**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ նորմատիվ-իրավական ակտերի աստիճանակարգության բուրգի գագարին գտնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի 6 հոդվածն ամրագրում է, որ այն «... ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը միայն կրկնում է վերոհիշյալ սահմանադրական դրույթները, միաժամանակ սահմանելով, որ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները նորմատիվ իրավական ակտեր են» (օրենքի 8 հոդվածի 4-րդ մաս):

Սահմանադրության հիշատակված 6 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության մեջ փաստացիորեն երկրորդ տեղի են գրադեցնում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը: Նշված հոդվածի 4-րդ

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

մասի համաձայն. «... Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»:

Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության մեջ հաջորդ տեղն են գրադեցնում սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները, որոնք «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին»:

Թեպետ վերջին տարիների պրակտիկան վկայում է, որ սահմանադրական դատարանի որոշումները պետք է համապատասխանեն միայն Սահմանադրությանը, և չկա որևէ անհրաժեշտություն կամ սահմանադրական պարտականություն դրանք կախվածության մեջ դնել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքից, որի դրույթները ևս կարող են դառնալ (և փաստորեն դարձել են) սահմանադրական վերահսկողության օրյեկտ: Այսպես, օրինակ, 2007թ. մայիսի 11-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը «Քաղաքացի Ի. Եղիգարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. Ենթակետի եւ 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով որոշում է ընդունել (ՍԴՈ-701): 2008թ. ապրիլի 15-ին ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է ընդունել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության եւ 12-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով (ՍԴՈ-751):

Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության մեջ հաջորդ տեղն են գրադեցնում Հայաստանի Հանրապետության օրենքները: Սահմանադրության 6 հոդվածի համաձայն. «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին»: Այս առումով սկզբունքային նշանակություն ունեն նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 2-րդ մասի դրույթները, որոնք սահմանում են, որ «Օրենքները պետք է համապա-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

տասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»: Նույն հոդվածը սահմանում է, որ «Օրենքները կարող են ընդունվել օրենսգրքերի տեսքով ...», ինչպես նաև, որ. «Օրենքը կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին» (համապատասխանաբար՝ 5-րդ և 6-րդ մասեր):

Օրենքներից հետո զայիս են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումները:

Իրավաբանական աստիճանակարգության պլանում Հանրապետության Նախագահի իրամանագրերը և կարգադրությունները զայիս են անմիջականորեն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումներից հետո: ՀՀ Սահմանադրության 56 հոդվածը սահմանում է, որ «Հանրապետության Նախագահը իրապարակում է իրամանագրեր եւ կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին ու ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում»:

Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության մեջ առանձին տեղ են զրադեցնում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի և կարգավորող հանձնաժողովների՝ օրենքում ուղղակիորեն ամրագրված իրենց լիազորությունների շրջանակում ընդունված որոշումները:

Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը շարունակում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները:

Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի աստիճանակարգությունն ավարտում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումները:

### - Իրավունքի ազգային համակարգում Սահմանադրության գեղը և աշանակությունը

ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն»: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին»: Քննարկվող հոդվածի եզրափակիչ մասը սահմանում է, որ «Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադ-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

բուրյան եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն իր 8 հոդվածի 1-ին մասում նախատեսում է, որ՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրավական կարգավորման սկզբունքները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության իրավական հիմքն է», իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները նորմատիվ իրավական ակտեր են»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեով»:

### **- Սահմանադրության որպես գերազույն իրավունքի ինչպիսի՞ հասկացություն է զարգացվում սահմանադրական դատարանի կողմից**

Վերջին 10 տարում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի գործունեության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ Սահմանադրությունը դիտարկվում է որպես գերազույն իրավունք, որը հիմնականում ունի ինքնարավ բնույթ:

### **- Սահմանադրության որպես էքսպլիցիիվ և իմպլիցիիվ իրավական կարգավորման հասկացությունը**

Սահմանադրությունը դիտարկվում է որպես էքսպլիցիիտ իրավական կարգավորման աղբյուր, այդքանով հանդերձ, մի շարք որոշումներում սահմանադրական դատարանը Սահմանադրությունը դիտարկել է որպես իմպլիցիիտ իրավական կարգավորման աղբյուր:

### **- Արդյո՞ք սահմանադրական արդարադապության քննազարդում Սահմանադրությունը համարվում է բացեր չունեցող իրավունք**

Ինչպես վերը նշվեց, սահմանադրական դատարանը Սահմանադրությունը դիտարկվում է որպես ինքնարավ բնույթ ունեցող գերազույն իրավունք, որը հիմնականում չունի բացեր: Սահմանադրական դատարանի կարծիքով՝ Սահմանադրության հնարավոր տարրներումները հանդիսանում են ոչ թե Սահմանադրության՝ որպես ինքնարավ բնույթ ունեցող գերազույն իրավունքի բացեր, այլ դրա տեքստի տարրներումները և բացեր:

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Այդքանով հանդերձ, նույնիսկ Սահմանադրության, որպես ինքնարավ բնույթ ունեցող, հիմնականում բացեր չունեցող գերազույն իրավունքի մեկնարանության ժամանակ, դրանում հնարավոր են ինստիտուցիոնալ և գործառնական բնույթի բացեր, որոնք չեն կարող հաղթահարվել դրա դրույթների սովորական մեկնարանության ճանապարհով: Այսպես, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանը չունի ՀՀ Սահմանադրության դրույթների վերացական մեկնարանության կամ լիազորությունների հարցով պետական իշխանության տարբեր մարմինների միջև ծագող վեճերի լուծման լիազորություն, ինչը, իր հերթին, կարող է հանգեցնել Սահմանադրության մեջ գործառնական բնույթի անհաղթահարելի բացերի առկայության:

**2.2. Երկրի Սահմանադրության մեջ իրավունքի բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու՝ սահմանադրական դատարանի լիազորությունների expressis verbis ամրագրումը**

**- Ինչպիսի՞ իրավական ակտեր են ուղակիորեն համարվում սահմանադրական վերահսկողության օրինակ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական վերահսկողության օբյեկտ են համարվում օրենքները, Ազգային ժողովի որոշումները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, ինչպես նաև միջազգային պայմանագրերը:

**- Արդյո՞ք երկրի Սահմանադրության մեջ ամրագրված են դրույթներ այն մասին, որ սահմանադրական դատարանը հետազուրում և գնահարում է իրավական կարգավորման բացերի (օրենսդրական բացերի) սահմանադրականությունը**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ գոյություն չունեն իրավական կարգավորման բացերի (օրենսդրական բացերի) սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու վերաբերյալ սահմանադրական դատարանի լիազորությունն expressis verbis ամրագրող դրույթներ:

**- Արդյո՞ք Սահմանադրության մեջ նախադեսում են օրենսդրական բացերի հետազուրման հարուկ ընթացակարգեր**

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ օրենսդրական բացերի հետազոտման հատուկ լնդագակարգեր նախատեսված չեն:

**2.3. Իրավունքի բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու վերաբերյալ սահմանադրական դատարանի լիազորությունների մեկնաբանությունը սահմանադրական արդարադատության բնագավառում**

**- Սահմանադրական դատարանը որպես Սահմանադրության պաշտոնական մեկնաբանող**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սահմանադրական դատարանի մասին օրենսդրության մեջ առկա չեն հիշատակումներ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության դրույթների ուղղակի վերացական մեկնաբանության հետազորության մասին: Սահմանադրական դատարանը Սահմանադրության այս կամ այն դրույթը մեկնաբանում է իր կողմից քննվող գործի շրջանակներում:

**- Արդյո՞ք սահմանադրական դատարանի կողմից մանրամասնվել է օրենսդրական բացերի հետազորվում և գնահապման վերաբերյալ սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության մեջ էքսպլիցիտ կերպով ամրագրված լիազորությունը**

Ոչ՝ Սահմանադրության մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նման լիազորության էքսպլիցիտ ամրագրման բացակայության պատճառով:

**- Ինչո՞վ են հիմնավորվում օրենսդրական բացերի հետազորվում և գնահապման վերաբերյալ սահմանադրական դատարանի լիազորությունների՝ Սահմանադրության մեջ էքսպլիցիտ ամրագրման մասին դատողությունները**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 93 հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը», որը 92 հոդվածի 2-րդ մասի ուժով՝ փաստորեն հանդիսանում է սահմանադրական արդարադատության հարցերով բարձրագույն դատական ասյանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն իր 1-ին հոդվածում սահմանադրական դատարանի կարգավիճակի վերաբերյալ

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ամրագրում է սկզբունքային դրույթ՝ սահմանելով, որ «Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը». իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի համաձայն (Սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական սկզբունքները)՝ վերջինս իրականացնում է իր գործունեությունը՝ հիմնվելով «գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման» սկզբունքի վրա, որի էությունը բացահայտվում է հիշյալ օրենքի 19 հոդվածում, որի համաձայն՝ «Գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով»:

Պետության մեջ սահմանադրական օրինականության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման հարցերում սահմանադրական դատարանի դերի և տեղի նման ընկալումն իմալիցիտ կերպով հաստատում է օրենսդրական բացերը հետազոտելու և գնահատելու նրա լիազորությունը:

**- Արդյո՞ք սահմանադրական դատարանի կողմից հասպարզել է օրենսդրական բացի առկայության բացահայտման հետևանքների մասին դոկումենտը**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը շատ գործերով՝ հետազոտելով օրենսդրական բացի առկայության բացահայտման հետևանքների հետ կապված հարցերը, գտնվել է այն սկզբունքային դիրքերում, որ օրենսդրության մեջ բացերի առկայությունն անմիջականութեն բացասական կերպով ազդում է Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և հիմնական ազատությունների իրացման վրա և խոչընդոտում է իրավական և ժողովրդավարական պետության կայացմանը:

**2.4. Սահմանադրական դատարանի գործունեությունը կարգավորող օրենքում կամ այլ իրավական ակտում իրավունքի բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու վերաբերյալ սահմանադրական դատարանի լիազորությունների ամրագրումը**

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

**- Արդյո՞ք սահմանադրական դատարանի գործունեությունը կարգավորող օրենքում կամ այլ իրավական ակտում նախադեսվում են օրենքներում և մյուս իրավական ակտերում բույլ գործած իրավական կարգավորման բացերը հետազոտելու և գնահատելու՝ սահմանադրական դատարանի լիազորություններ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի գործունեությունը կարգավորող օրենքում կամ այլ իրավական ակտում էքսպլիցիտ կերպով չեն նախատեսվում օրենքներում և մյուս իրավական ակտերում բույլ տրված իրավական կարգավորման բացերը հետազոտելու և գնահատելու՝ սահմանադրական դատարանի լիազորություններ: Այդքանով հանդերձ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ հիմք են տալիս ենթադրելու, որ սահմանադրական դատարանն ունի այդպիսի իրավունք: Այսպես, օրինակ, 63 հոդվածում սահմանվում է, որ «Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձեռավորված իրավակիրառական պրակտիկան» (1-ին մաս), իսկ 68 հոդվածի 7-րդ մասն ամրագրում է, որ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ որոշում ընդունելիս սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, մասնավորապես հաշվի առնելով՝ «մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների բույլատրելիությունը, Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովածությունը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների բույլատրելի սահմանները, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

**- Այդպիսի օրենքում (այլ իրավական ակտում) նախադեսվում են, արդյոք, այդպիսի բացերը հետազոտելու հարուկ ընթացակարգեր**

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում այդպիսի բացերի հետազոտման հատուկ ընթացակարգեր չեն նախատեսվում: Բացերը հետազոտվում են միայն սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսացող օրենսդրական կամ այլ նորմատիվ իրավական ակտերի վիճարկվող դրույթների նկատմամբ սահմանադրական վերահսկողության ընդհանուր կարգով:

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

**- Այդպիսի օրենքի կամ իրավական ակտի համաձայն՝ ինչպիսի՝ որոշումներ է ընդունում սահմանադրական դատարանն օրենսդրական բացի առկայությունն ամրագրելիս**

Այդպիսի դեպքերում դատարանն ընդունում է համապատասխան դրույթները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին որոշումներ /տես, մասնավորապես, վերոհիշյալ 1.2. կետում ՍԴՈ-630 և ՍԴՈ-690 որոշումները/:

**- Նշված օրենքով կամ իրավական ակտով նախարեսվու՞մ է, արդյոք, ով և ինչպես պետք է վերացնի օրենսդրական բացը**

Ուղղակիորեն չի նախատեսվում, սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներ կարող են հիմք հանդիսանալ դրա համար:

Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17 մասերի համաձայն՝ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Այդ դեպքում մինչեւ ակտի իրավաբանական ուժը կորցնելն այն համարվում է Սահմանադրությանը համապատասխանող:

Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր եւ անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետեւանքները կանխելուն ուղղված միջոցառումները:

Հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որ պեսզի դրանով իրավես կանխվեն անխուսափելի եւ ծանր հետեւանքները հանրության եւ պետության համար, եւ ավելի էական վճար չպատճառվի մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին եւ ազատություններին:

Նույն օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ:

**- Արդյո՞ք դա նախադեսվում է այլ օրենքներում կամ իրավական ակտերում (օրինակ՝ խորհրդարանի կանոնակարգում)**

Կարելի է մատնանշել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, որի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին:

Կարելի է մատնանշել նաև ՀՀ քրեական դատավարության եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի այն դրույթները, որոնք նախատեսում են համապատասխանարար՝ քրեական եւ քաղաքացիական գործերի նորոգում, եթե դատարանների կողմից կիրառված օրենքը սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող:

### **3. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑՔ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՕԲՅԵԿՏ**

#### **3.1. Սահմանադրական դատարան դիմելը**

**- Ձեր երկրում ի՞նչ սուրյեկտներ կարող են դիմել սահմանադրական դատարան**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի՝ ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել՝ Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում, կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով, յուրաքանչյուր ոք (այդ թվում նաև իրավաբանական անձինք)՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԽՆԴԻՐՆԵՐ

պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, դատարանները եւ գլխավոր դատախազով՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով, Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ եւ 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

### - **Արդյո՞ք նրանք բոլորը, կարող են օրենսդրական բացի հարց բարձրացնել**

Ոչ: Միայն այն սուբյեկտները, որոնք կարող են դիմել սահմանադրական դատարան Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետում նշված հարցերով. Հանրապետության Նախագահը, պատգամավորների առնչվազն մեկ իհնգերորդը, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, դատարանները եւ գլխավոր դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը:

### **3.2. Օրենսդրական բացերը դիմողների դիմումներում և միջնորդություններում**

**- Կարո՞ղ են, արդյոք, սահմանադրական դատարան դիմողները վիճարկող ակտի սահմանադրականության վերաբերյալ իրենց կասկածները հիմնավորել նրանով, որ, իրենց կարծիքով, ակտում առկա է իրավունքի բաց (օրենսդրական բաց)**

Այս:

**- Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների ո՞ր մասն են կազմում այն դիմումները, որոնցում իրավական ակտի Սահմանադրությանը հակասությունը հիմնավորվում է օրենսդրական բացով**

2006թ. հուլիսի 1-ից 2007թ. սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը ունեցող սուբյեկտների կողմից իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը վիճարկվել է 83 դիմումներում, որից 14 դի-

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՐՆԵՐ**

մումներում անհամապատասխանությունը հիմնավորվել է օրենսդրական բացով:

**- Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը ունեցող ո՞ր սուրյեկտներն են մյուսների համեմապուրյամբ առավել հաճախ իրենց դիմումներում մագրնանշում օրենսդրական բացերը որպես Սահմանադրությանն իրավական ակտի անհամապատասխանության պարմառ**

Սահմանադրությանն իրավական ակտի անհամապատասխանությունն օրենսդրական բացի հիման վրա՝ հիմնականում վիճարկվում է անհատական դիմումներում: Զաղաքացիներին օրենքով սահմանադրական դատարան դիմելու իրավունքը վերապահելուց ի վեր. 2006թ. հուլիսի 1-ից մինչեւ 2007թ. սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում սահմանադրական դատարանում մուտքագրվել է 448 անհատական դիմում, որոնցից քննության է ընդունվել 25-ը, քննության ընդունված անհատական դիմումներում օրենսդրական բացի հիման վրա իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասությունը վիճարկվել է 13 դեպքում:

**- Արդյո՞ք նախագրեավում են հավույլ պահանջներ օրենսդրական բացի հակասահմանադրականության հարց պարունակող դիմումի չելի, բռվանդակության կամ կառուցվածքի համար: Եթե այս, բնութագրեք դրանք: Այդպիսի պահանջները սահմանված են սահմանադրական դատարանի գործունեությունը կարգավորող օրենքում, բե՛՛ չեավորված են սահմանադրական արդարադարպության պրակտիկայում**

Հատուկ պահանջներ նախատեսված չեն:

**3.3. Օրենսդրական բացերի հետազոտումը սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ**

**- Արդյո՞ք սահմանադրական դատարանը դիմումը քննիլիս օրենսդրական բացը հետազոտելու ex officio նախաձեռնությունն է ցուցաբերում և ինչո՞վ է դա հիմնավորում (եթե դիմողի կողմից օրենսդրական բացի հարց չի բարձրացվել): Ցույց տվեք առավել բնութագրական գործերը և որքան հնարավոր է լայնորեն ներկայացրեք դատարանի դիրքորոշումները**

Այս: Դա հիմնավորվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածով, 63 հոդվածի 1-ին մասով, 68 հոդվածի 7-րդ մասով:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Մասնավորապես, համաձայն ՍԴ մասին ՀՀ օրենքի 19 հոդվածի՝ «Գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով եւ գործում առկա այլ նյութերով»:

Համաձայն ՍԴ մասին ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի՝ «Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ճեւավորված իրավակիրառական պրակտիկան»:

Համաձայն ՍԴ մասին ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի՝ «... որոշում ընդունելիս սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝

- 1) իրավական ակտի պահանջվող տեսակը.
- 2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.
- 3) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների բույլատրելիությունը.
- 4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը.
- 5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների բույլատրելի սահմանները.
- 6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

Առավել բնութագրական գործերից կարելի է նշել հետևյալները.

- ա) սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշումը (դատարանի հիմնավորումները տես վերը՝ 1.2. կետում),
- բ) սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665 որոշումը.

ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում դիմողը մասնավորապես նշել է, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանն իր «Դիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ իրեն զրկել է իր իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունից, որը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով: Նրա կարծի-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՊԽՆԴԻՐՆԵՐ

քով, դրա պատճառը ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության շարադրանքի անորոշությունն է, որի պատճառով այն դատական պրակտիկայում կիրառվում է միանշանակ ի վեմաս մարդու եւ քաղաքացու դատական պաշտպանության իրավունքի: Օրենքի այդպիսի անորոշությունը հակասում է իրավական պետության՝ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքին (դատարանի հիմնավորումները տես վերը՝ 1.2. կետում),

գ) սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշումը.

Դիմողներն իրենց դիրքորոշումը հիմնականում պատճառաբանում են հետեւյալ փաստարկներով. յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրապարակային քննության իրավունք: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները ձեւակերպված չլինելով որոշակի, միատեսակ մատչելի ու բավարար ճշտությամբ, չբխելով քաղաքացիական դատավարության մասին օրենսդրության ընդհանուր տրամաբանությունից, հնարավորություն չեն տալիս անձին դրանց համապատասխանեցնել իր վարքագիծը եւ դատական կարգով արդյունավետ պաշտպանել իր սահմանադրական իրավունքները: Ըստ դիմող կողմի՝ օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջին նաեւ այն առումով, որ դրանցով չի սահմանվել վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու բավարար հստակ ձեւակերպված լնթացակարգ (դատարանի հիմնավորումները տես վերը՝ 1.2. կետում):

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետը՝ վճռաբեկ բողոքը վերադանելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին եւ 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր,

դ) **Առևտական մուլեցում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից գուցարերվել սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-691 որոշմամբ:**

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՈՆԴԻՐՆԵՐ**

### **3.4. Օրենսդրական բացերն օրենքներում և մյուս իրավական ակտերում**

**- Արդյո՞ք սահմանադրական դատարանի կողմից հետազողվում և գնահավաքվում են իրավական կարգավորման բացերը ոչ միայն օրենքներում, այլ նաև մյուս իրավական ակտերում (օրինակ՝ միջազգային պայմանագրերում, ենթաօրենսդրական ակտերում և այլն)**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը։ Հետևաբար, իրավական կարգավորման բացի խնդիրը տեսականորեն կարող է ուսումնասիրվել և գնահատվել այդ բոլոր ակտերի կամ դրանց դրույթների սահմանադրականության հարցը լուծելիս։ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ընթացքում միայն մեկ դեպք է եղել, երբ այդ խնդիրն ուսումնասիրվել է ենթաօրենսդրական ակտի սահմանադրականության հարցի լուծման ժամանակ։ Պետք է նշել, որ դա ընդհանրապես միակ դեպքն է, երբ ենթաօրենսդրական ակտը քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում։ Այդ գործի քննության ընթացքում սահմանադրական դատարանի կայացրած որոշմամբ /18.04.2006թ., ՍԴ-630/ արձանագրվել է, որ ՀՀ կառավարության 1 օգոստոսի 2002թ. թիվ 1151-Ն որոշումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը։

**- Օրենսդրական բացը նշանակում է միայն Սահմանադրությանը հակասող իրավական կարգավորման բացը, քեզ նաև իրավական կարգավորման բացը, որը հակասում է առավել բարձր իրավարանական ուժ ունեցող իրավական կարգավորմանը /օրինակ, երբ կառավարության ակտում բացակայում են իրավական կարգավորման դարրերը, որոնք անհրաժեշտ են Սահմանադրության կամ Սահմանադրությանը չհակասող օրենքի համաձայն/**

Եթե առավել ցածր իրավարանական ուժ ունեցող ակտում բացակայում են իրավական կարգավորման տարրերը, որոնք անհրաժեշտ են Սահմանադրությանը չհակասող՝ առավել բարձր իրավարանական ուժ ունեցող ակտի համաձայն, ապա այդպիսի օրենսդրական բացը ճանաչվում է որ-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

պես օրենսդրական բաց, որը հակասում է և՝ Սահմանադրությանը, և՝ Սահմանադրությանը չհակասող՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին:

**- Կարելի է, արդյոք, պարզվագույն օրենսդրության դեպքում որպես օրենսդրական բաց դիմել այն հանգամանքը, եթե պարզվագույն ժամանակ կիրառվում է «կարող է» («իրավունք ունի», «իրավասու է») հասկացությունը, իսկ ենթաօրենսդրական ակտով ասհմանված կարգադրումը ներառում է միայն պարզվագույն մի մասը**

ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան պրակտիկայից կարելի է մատնանշել նրա 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշումը: Այս որոշման մեջ սահմանադրական դատարանը ՀՀ կառավարության վիճարկող որոշման կապակցությամբ մասնավորապես նշել է. «ՀՀ կառավարության քննության առարկա որոշումն իր բովանդակությամբ նպատակների հայտարարագրում է որոշակի գործողություններ իրականացնելու համար: Խնդիրն այդ նպատակների բնույթի եւ իրավական բովանդակության գնահատումը չէ: Հարցն այն է, թե ի՞նչ իրավական հիմքերով է ընդունվել այդ որոշումը: Որոշման նախարանում ասվում է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ ու Հայաստանի Հանրապետության հոդային օրենսգրքի 104-րդ հոդվածներին համապատասխան եւ Երեւանում կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է....»: Այլ հիմնավորումներ չկան: ՀՀ կառավարության որոշումը վկայակոչում է այնպիսի օրենսդրական դրույթներ, որոնք բավարար հիմք չեն կարող հանդիսանալ սեփականության հարկադիր օտարման համար: Կարեւոր է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի 2-րդ կետում սահմանվում է, որ «Պետության կամ համայնքի կարիքների համար հոդամարդ վերցնելու մասին որոշում ընդունելու լիազորություն ունեցող պետական մարմինը, ինչպես նաև այդ որոշման նախապատրաստման եւ ընդունման կարգը սահմանվում են օրենքով»: Օրենսգրքում նման դրույթի առկայությունը վկայում է այդ հարցերի օրենքի մակարդակով կարգավորման անհրաժեշտության մասին: Իսկ դա անհրաժեշտ է սեփականության իրավունքի պաշտպանության օրենսդրական երաշխիքներ ապահովելու համար: Սակայն գործի քննությունը վկայեց, որ ՀՀ իրավական ակտերի համակարգում դեռևս նման օրենք չի ընդունվել»:

Այս կապակցությամբ հարկ է հիշատակել նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասը, որի համաձայն՝

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՈՆԴԻՐՆԵՐ**

անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ:

### **3.5. Սահմանադրական դատարանի մերժումը՝ հետազոտելու և գնահատելու իրավունքի բացերը**

**- Ինչո՞ւ է սահմանադրական դատարանը հիմնավորում իրավական կարգավորման բացի սահմանադրականությունը հետազույթելու և զնահավելու մերժումը/նման հետազույթություններ կատարելու համար Սահմանադրության մեջ և օրենքում ուղղակի հղումների բացակայությունը, «քաղաքական հարցերի» դոկտրինան, իրավասպեղծ գործունեության մեջ օրենսդրի բացառիկ իրավասության նկարմամբ հարգանքը և այլն/**

Եթե դիմումը համապատասխանում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ապա սահմանադրական դատարանը պարտավոր է քննության ընդունել այդ դիմումը, հետազոտել և գնահատել իրավական կարգավորման բացի սահմանադրականությունը:

### **3.6. «Նմանատիպ» բնույթի հետազոտությունների նախաձեռնումը**

**- Կարո՞՞ւ է, արդյոք, սահմանադրական դատարանը, չհետազույթելով օրենսդրական բացերը, սահմանադրական դատավարության գործերով իրականացնել «նմանատիպ» բնույթի հետազույթություններ: Այդիսի հետազույթություններ իրականացվում են դիմովի խնդրանքո՞վ, թե՞ դատարանի նախաձեռնությամբ: Արդյո՞ք այդպիսի հետազույթությունները կապված են եղել սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ**

Ոչ: Իրավունքի բացի տարբերակից հատկությունը կայանում է նրանում, որ այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ բացակայում է կոնկրետ նորմատիվ պատվիրանը, ընդհանուր առմամբ և ամբողջությամբ իրավունքով կարգավորված են, օրենսդրին այստեղ իր կամքն արտահայտել է նմանատիպ հանգամանքները կարգավորելու միջոցով, իրավունքի ընդհանուր նորմերի, ընդհանուր և ճյուղային իրավական սկզբունքների միջոցով: Այստեղից բխում է, որ օրենսդրական բացի հայտնաբերման համար պետք է բացահայտել **նմանատիպ հանգամանքների** կարգավորվածության առկայության փաստը: Այսպիսով, առանց հետազոտելու օրենսդրական բացերը, անիմաստ են դառնում «նմանատիպ» բնույթի հետազոտությունները:

#### 4. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

##### 4.1. Օրենսդրական բացերի հետազոտման առանձնահատկությունները

- *Օրենսդրական բացերի հետազոտման առանձնահագիտությունները a priori և a posteriori սահմանադրական վերահսկողությունն իրականացնելիս: Արդյո՞ք ծագում է օրենսդրական բացերի հիմնախմբի համարյան իշխանության մարմինների իրավասության, սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտման և այլնի վերաբերյալ սահմանադրական դադարադրության գործեր քննելիս: Օրենսդրական բացերի հետազոտման և գնահատման առանձնահագիտություններն այն օրենքների վերաբերյալ սահմանադրական դադարադրության գործեր քննելիս, որոնցով ապահովվում է անձի իրավունքների և ազատությունների /քաղաքացիական, քաղաքական, սոցիալական և մշակութային/ իրականացումը*

Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական դատավարության առանձնահատկություններից անկախ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածը, 63 հոդվածի 1-ին մասը և 68 հոդվածի 7-րդ մասը նախատեսում են օրենսդրական բացերի հետազոտման և գնահատման միասնական մոտեցում:

Մասնավորապես, համաձայն ՍԴ մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ «Գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով եւ գործում առկա այլ նյութերով»:

Համաձայն ՍԴ մասին ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի՝ «Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան»:

Համաձայն ՍԴ մասին ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի՝ «... որոշումը ընդունելիս սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝

- 1) իրավական ակտի պահանջվող տեսակը.
- 2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.
- 3) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրա-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

վունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների բույլատրելիությունը.

4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովածությունը.

5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների բույլատրելի սահմանները.

6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

**- Նյուրական և դադավարական իրավունքում օրենսդրական բացերի հետազոտման առանձնահարկելությունները: Մասնավոր և հանրային իրավունքում օրենսդրական բացերի հետազոտման յուրահարկելությունը: Օրենսդրական բացերի հետազոտման յուրահարկելությունը միջազգային պայմանագրերի սահմանադրականությունն սկզբունքի մասին: Այս հարցերին պարագանելիս նշեք սահմանադրական դադավարությանն առավել բնորոշ գործերը:**

Սահմանադրական վերահսկողության և սահմանադրական դատավարության առանձնահատկություններից անկախ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածը, 63 հոդվածի 1-ին մասը և 68 հոդվածի 7-րդ մասը նախատեսում են օրենսդրական բացերի հետազոտմանը և գնահատմանը միասնական մոտեցում:

Սակայն ՀՀ սահմանադրական դատարանը դատավարական նորմերի սահմանադրականության հարցը քննարկելիս հասուն ուշադրության եւ վերլուծության առարկա է դարձնում այն հարցը, թե արդյոք ամրագրված նյութական իրավունքի համար ապահովված է համապատասխան դատավարական իրացման հնարավորություն: Մասնավորապես, սահմանադրական դատարանի 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665 որոշման մեջ սահմանադրական դատարանը, այդ հարցի քննարկման արդյունքում, նշել է. «ՀՀ քաղ. օր.-ի 14 եւ 15 հոդվածների համապատասխան դրույթների եւ ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի բովանդակության համեմատական վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը փորձելով ՀՀ քաղ. օր.-ի 14 եւ 15 հոդվածներում նշված դրույթների պահանջներին համարժեք ձեւավորել դրանց դատավարական լուծման ընթացակարգը, ստեղծել է, սակայն, այնպիսի իրավիճակ, երբ դատավարական իրավունքի նորմն արգելվ է դարձել նյութական իրավունքի նորմի իրականացմանը»: Խնդրությունը պարագանելի կապակցությամբ հարկ է մատնանշել նաև սահմանադրական

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

դատարանի 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշումը, որում սահմանադրական դատարանը, մասնավորապես, նշել է. «Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմների»: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ ինչ անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու եւ երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»:

### 4.2. Օրենսդրական բացի առկայության ամրագրումը

- *Ցույց դվեր երկրի սահմանադրական արդարադարպության բնագավառում չեավորված չափանիշները, որոնց համապատասխան՝ իրավական կարգավորման բացերը ճանաչվում են հակասահմանադրական*

Իրավական կարգավորման բացի սահմանադրականության գնահատման ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը կիրառում է իրավական ակտերի կամ դրանց դրույթների սահմանադրականության գնահատման ընդհանուր չափանիշները՝ առաջնորդվելով նաև արդեն հիշատակված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի և 68 հոդվածի 7-րդ մասի դրույթներով:

Նմանատիպ գործերի քննության ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանը որպես ելակետային եւ հիմնական սկզբունք հիմնվում է իրավունքի գերակայության սկզբունքի վրա, որի բովանդակությունը բացահայտված է վերոհիշյալ հոդվածների դրույթներում:

- *Արդյո՞ք սահմանադրական դադարանքը հետազոտում է օրենքի կամ այլ իրավական ակտի միայն վիճարկվող դրույթները: Սահմանադրական դադարանքը բավարարվում է վիճարկվող դրույթների /կամ վիճարկվող ակտի/ բովանդակության բացառապես ավարտնում հետազոտությամբ, թե՝ դրանք վերլուծում է ամրող ակտում /ակտերի համակարգում կամ իրավունքի ողջ բնագավառում/ սահմանված իրավական կարգավորման համապերագում*

ՍԴ մասին ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ «Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետում նշված որեւէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաև այդ դրույթները»:

Բացի դրանից, ՍԴ իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրավական ակտը կամ դրա դրույթը գնահատելիս՝ ՍԴ-ն հետազոտում է նաև այլ իրավական ակտեր: Մասնավորապես.

ա) 2006թ. հոկտեմբերի 10-ի ՍԴ-Ո-650 որոշման մեջ ՍԴ-ն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, ՀՀ հոդային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 101 հոդվածի, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ գանգատները քննարկելու կարգի մասին» 04.12.1990թ. օրենքի 2-րդ կետի, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» 24.11.1999թ. օրենքի հոդված 2-ի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 31 հոդվածի եւ 50 հոդվածի 1-ին մասի ա) կետի համեմատական վերլուծության արդյունքում արձանագրում է, որ «նշված իրավական նորմերի համադրումը վկայում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280 հոդվածը սահմանել է սեփականության իրավունքից իրաժարվելու ընդհանուր իրավական հիմքը, իսկ ՀՀ հոդային օրենսգրքի 100 եւ 101 հոդվածները՝ հոդամասի նկատմամբ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց իրավունքների դադարման համատեքստում, հստակ ու որոշակի կանոնակարգել են հոդամասից իրաժարվելու հիմքերը, մասնավորապես՝ հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 3, 8 եւ 31 հոդվածների պահանջները»,

բ) 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴ-Ո- 665 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի սահմանադրականության հարցին, սահմանադրական դատարանը նշում է, որ ընդհանուր իրավասության դատարանների կողմից ձեռավորված դիրքորոշումը, սակայն՝ կապված ՀՀ քաղ. դատ. օր.-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության մեկնաբանության հետ, ոչ միայն համահունչ չէ ՀՀ քաղ. օր.-ի 15 հոդվածի 1-ին կետին, այլ նաև հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 4-րդ կետի այն դրույթին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն, ի թիվս այլոց, ունեն ՀՀ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները եւ վճռաբեկ դատարանը՝ օրենքին կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին հակասող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճանաչելու մասով: Միաժամանակ, «Իրավական

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ակտերի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումները, գերատեսչական իրավական ակտերը եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացրածների, ներքին եւ անհատական իրավական ակտերը չպետք է հակասեն օրինական ուժի մեջ մտած ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերին»,

գ) 2007թ. մայիսի 11-ի ՍԴՈ-701 որոշման մեջ ՍԴ-ն նշում է, որ վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն ածանցյալ է եւ անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթներից: Հետեւաբար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձեւակերպումն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանվի Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համատեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը,

դ) 2007թ. հուլիսի 24-ի ՍԴՈ-710 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. «.... ովհմողը վիճարկում է ՀՀ քր.դատ.օր.-ի 311 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը: Մինչդեռ քրեական գործը դատարանի կողմից լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը կարգավորվում է ոչ միայն վիճարկվող հոդվածի 2-րդ կետով, այլև ամբողջ հոդվածով, ինչպես նաև ՀՀ քր.դատ.օր.-ի 292 հոդվածի 5-րդ կետով, 297 հոդվածով, 363 հոդվածի 2-րդ մասով, 394 հոդվածի 5-րդ մասով, 398 հոդվածի 6-րդ մասով, 419 հոդվածի 2-րդ կետով, 421 հոդվածի 3-րդ մասով: Ուստի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքով, սահմանադրական դատարանը պարտավոր է պարզել նաև վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի վերոհիշյալ դրույթների սահմանադրականությունը»: Գործի քննության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող եւ անվավեր է ճանաչել ոչ միայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները, այլ նաև վերոհիշյալ հոդվածների դրույթները,

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Ե) 2008թ. ապրիլի 15-ին ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է ընդունել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության և 12-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով (ՍԴՈ-751): «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան՝ սահմանադրական դատարանն անդրադարձել է վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի սահմանադրականության հարցին և այդ մասի դրույթները ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմունների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

**- Արդյո՞ք սահմանադրական դատարանը կարող է քննարկել և գնահավել իրավական կարգավորման՝ նախկինում գոյություն ունեցած օրենսդրական բացերը: Արդյո՞ք վիճարկվող դրույթների /վիճարկվող ակտի/ գարգացումը վերլուծելիս սահմանադրական դատարանն ամրագրում է իրավական կարգավորման՝ նախկինում գոյություն ունեցած բացերը**

Ոչ, եթե իրավական ակտը կորցրել է իրավաբանական ուժը, ապա այն այլեւս չի կարող վիճարկվել սահմանադրական դատարանում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի համաձայն՝ գործի վարույթը կարճվում է, եթե իրավական ակտը կամ դրա դրույթը, որի համապատասխանությունը Սահմանադրությանը վիճարկվում է, վերացվել է կամ ուժը կորցրել գործի դատաքննությունից առաջ կամ դրա ընթացքում:

**- Օրենսդրական բացը նույնականացնելիս սահմանադրական դատարանը հետազոտում և գնահավում է միայն իրավական կարգավորման բովանդակությունը և չեղ, թե՝ այդրանով հանդերձ՝ նաև դրա իրացման պրակտիկան**

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի՝ «Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան»:

Սահմանադրական դատարանի պրակտիկայում սակավ չեն այն դեպքերը, երբ կոնկրետ իրավական ակտը կամ դրա առանձին դրույթը գնահատելիս դատարանն օգտվում է իրավակիրառական պրակտիկայից, մասնավորապես, այն լուրջ ուսումնասիրության առարկա հանդիսացավ ՀՀ ՍԴՈ-665 գործով (դատարանի հիմնավորումները տես վերը՝ 1.2. կետում):

ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրության 18 և 19 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր է ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ:

### 4.3. Օրենսդրական բացի բացահայտման մեթոդանությունը

- *Տվեր սահմանադրական արդարադարպության մեջ օրենսդրական բացի բացահայտման մեթոդանությունը: Օրենսդրական բացը բացահայտելիս ինչպիսի մեթոդներ կամ դրանց համակցություն է կիրառվում սահմանադրական դատարանի կողմից: Օրենսդրական բացն արժանագրելիս ինչպիսի նշանակություն է փրկում քերականական, պրամարտական, պատմական, համակարգային, քենոզիական և մյուս մեթոդներին*

Թվարկվածներից բացի, սահմանադրական դատարանն իր որոշումներում հաճախակի օգտվում է նաև համեմատական վերլուծության մեթոդից:

- *Արդյո՞ք օրենսդրական բացերը քննարկելիս և գնահատելիս սահմանադրական դատարանը դեկազարվում է /ուղղակի կամ անուղղակի կերպով/ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Արդարության եվրոպական դատարանի, միջազգային արդարադարպության մյուս ինսպիրուվածների, մյուս երկրների սահմանադրական կամ գերազական դատարանների պրակտիկայով*

ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայի անօտարելի մասն է կազմում այլ երկրների սահմանադրական արդարադատության մարմին-

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ների և միջազգային կազմակերպությունների, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փորձի ուսումնասիրությունը: Գրեթե բոլոր գործերում այս կամ այն կերպ շոշափվում է խնդրո առարկա հարցերի վերաբերյալ Եվրոպական դատարանի և այլ երկրների փորձը:

### **4.4. Լրացուցիչ միջոցներ**

**- Արդյո՞ք օրենսդրական բացի առկայության ամրագրման դեպքում, եթե դա կապված է անձի իրավունքների պաշտպանության հետ, սահմանադրական դատարանը չեռարկում է որևէ գործողություն այդ իրավունքների ապահովման ուղղությամբ: Եթե այս, ապա՝ ինչպիսի՞ց**

Արդեն նշվել է, որ օրենսդրական բացի առկայության հավաստման դեպքում սահմանադրական դատարանի որոշումը երբեմն ուղղակի մոտեցումներ է պարունակում համապատասխան մարմինների առնչությամբ՝ այդ բացը լրացնելու ուղղությամբ:

Դրանից բացի, համաձայն ՍԴ մասին ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի՝ «Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը /երբ վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր/ սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում ընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետեւանքներ:»

Սույն մասի առաջին պարբերությունում նշված որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով»:

Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ «Զրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այդ դրույթն իրավաբանական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից:

Այդ դրույթի կիրառման վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական եւ վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման»:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Բացի դրանից, նույն օրենքի 34 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Գործը քննության ընդունելուց հետո սահմանադրական դատարանը դիմու կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչեւ գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել այն իրավական ակտի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնախ կամ ծանր հետևանքների դիմու կողմի կամ հանրության համար»:

### 4.5. Սահմանադրական դատարանը հետազոտում է օրենսդրական բացը՝ որպես սահմանադրական դատավարությունում գործի քննության տարր, սակայն դրա սահմանադրականությունը չի գնահատում

- *Արդյո՞ք սահմանադրական դատարանի որոշման պարճառարանական մասում արժանագրվում է իրավական բացը /օրենսդրական բացը/, և արդյո՞ք օրենսդրի կամ իրավասունդը գործունեության այլ սուրյեկտի ուշադրությունն է իրավիրկում իրավական բացի /օրենսդրական բացի/ լրացման անհրաժեշտության վրա, արդյո՞ք օրենսդրին /իրավասունդը գործունեության այլ սուրյեկտին/ առաջարկություններ են արվում, թե ինչպես կարելի է խուսափել իրավական կարգավորման անան թերություններից /արդյո՞ք ցույց են դրվում հնարավոր իրավական կարգավորման չափանիշները, փոփոխությունների ընդունման խորհուրդ պրլող ժամկետները/: Արդյո՞ք սահմանադրական դատարանը նշում է իր որոշման պարճառարանական մասում, թե ինչպես պեսք է ընկալել իրավական կարգավորումը, որպեսզի դրանում բույլ չպրվեն օրենսդրական բացեր՝ այդպիսով չենափոխելով գոյություն ունեցող իրավական կարգավորումը /փաստացիորեն այն լրացնելով/: Արդյո՞ք սահմանադրական դատարանն իր որոշման պարճառարանական մասում արժանագրում է օրենսդրական բացի կամ իրավական կարգավորման այլ բացի առկայությունը, և արդյո՞ք նշում է, որ իրավական կարգավորման այդպիսի բացը լրացվում է ընդհանուր իրավասության դատարանների կողմից ընդհանուր իրավական սկզբունքների կիրառման ճանապարհով: Արդյո՞ք սահմանադրական դատարանը կիրառում է օրենսդրական բացերի գնահապեման և լրացման այլ մոդելներ*

Ինչպես վերը նշվեց, օրենսդրական ակտերի կամ դրանց դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործերի բնորոշ առանձնահատկություններից են սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում արտահայտված ուղղակի կամ անուղղակի պատվիրակումները՝ ուղղված իրավաստեղծ կամ իրավակիրառ մարմիններին՝ օրենսդրական բացը լրացնելու կամ իրավա-

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

կիրառման փուլում ՍԴ դիրքորոշման մեջ նշված մեկնաբանությունների համատեքստում օրենսդրական բացը հաղթահարելու անհրաժեշտության առնչությամբ: Մանրամասն տես՝ սահմանադրական դատարանի թիվ 652, 674, 678, 700 և 705 որոշումները:

Բացի դրանից, սահմանադրական դատարանն իրավական ակտի վիճարկվող դրույթներում /վիճարկվող իրավական ակտում/ հայտնաբերելով օրենսդրական բաց, ex officio պարտավոր է գնահատել դրանց սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը ex officio պարտավոր է գնահատել նաև վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխսկապակցված, միևնույն վիճարկվող ակտում գտնվող այլ դրույթներում օրենսդրական բացի սահմանադրականությունը:

### **4.6. Օրենսդրական բացի գնահատումը սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում**

**- Սահմանադրական դատարանը որոշման պարզաբանական մասում արձանագրելով օրենսդրական բացի առկայությունը, որոշման եզրափակիչ մասում.**

**ա) օրենքը/այլ իրավական ակտը/ ճանաչո՞ւմ է Սահմանադրությանը հակասող,**

**բ) օրենքի/ակտի/ համապատասխան դրույթները ճանաչո՞ւմ է Սահմանադրությանը հակասող,**

**գ) ակտը/դրա դրույթը/ մնում է ուժի մեջ, միաժամանակ օրենսդրի/իրավասկեղծ գործունեության այլ սուբյեկտի/ անգործությունը ճանաչվո՞ւմ է հակասահմանադրական՝ այն ժամկետի նշումով, մինչև որի լրանալը պետք է սահմանվի պարզադիր, Սահմանադրությանը համապատասխանող իրավական կարգավորում,**

**դ) արձանագրո՞ւմ է օրենսդրի/իրավասկեղծ գործունեության այլ սուբյեկտի/ պարզականությունը՝ լրացնելու իրավունքի բացը /բացը լրացնելու նշումով կամ առանց դրա/,**

**ե) արձանագրո՞ւմ է իրավական կարգավորման բացը՝ նշելով, որ այն լրացնել կարող են ընդհանուր կամ մասնագիրացված դատարանները,**

**զ) պարզավորեցնո՞ւմ է ընդհանուր իրավասության և մասնագիրացված դատարաններին կասեցնել գործերի քննությունը և չկիրառել գոյություն ունեցող իրավական կարգավորումը՝ մինչև բացն օրենսդրի/իրավասկեղծ գործունեության այլ սուբյեկտի/ կողմից լրացվելը,**

**է) արձանագրո՞ւմ է իրավական կարգավորման բացը, ընդ որում, չի անում ուղղակի եզրափակումներ և չի սահմանում ոչ մի պարզականություններ,**

**Թ այլ կե՞րպ է գնահապում օրենսդրական բացը**

Իր որոշման եզրափակիչ մասում, համաձայն ՍԴ մասին օրենքի 68 հոդվածի 8-րդ մասի, սահմանադրական դատարանը վիճարկվող ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող կամ այն ամբողջությամբ կամ մասամբ՝ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

**4.7. «Նմանատիպ» բնույթի հետազոտություններն ընդունվող որոշումներում**

- **Ի՞նչն է բնուրագրական «նմանատիպ» բնույթի հետազոտություններին, որոնք սահմանադրական դարավարության գործերով իրականացվում են սահմանադրական դարավարանի կողմից, որը չի հետազոտում օրենսդրական բացերը: Այդպիսի գործերով ընդունվող որոշումների առանձնահարկությունները: Այս հարցերին պարասխանելին՝ նշեք սահմանադրական դարավարությանն առավել բնորոշ գործերը**

Իրավունքի բացի տարբերակիչ հատկությունը կայանում է նրանում, որ այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ բացակայում է կոնկրետ նորմատիվ պատվիրանը, ընդհանուր առմամբ և ամբողջությամբ իրավունքով կարգավորված են, օրենսդիրն այստեղ իր կամքն արտահայտել է նմանատիպ հանգամանքները կարգավորելու միջոցով, իրավունքի ընդհանուր նորմերի, ընդհանուր և ճյուղային իրավական սկզբունքների միջոցով: Այստեղից բխում է, որ օրենսդրական բացի հայտնաբերման համար պետք է բացահայտել նմանատիպ հանգամանքների կարգավորվածության առկայության փաստը: Այսպիսով, առանց հետազոտելու օրենսդրական բացերը, ամիմաստ են դառնում «նմանատիպ» բնույթի հետազոտությունները:

Բացի դրանից, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածը վերաբերում է իրավական ակտերի նորմերի կիրառմանն անալոգիայով: Ըստ այդ հոդվածի՝ «Եթե ծագած հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ իրավական այլ ակտերով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կարող են միայն օրենքով նախատեսված դեաբերում կիրառվել համանման հարաբերություններ կարգավորող իրավական ակտերը (անալոգիա): Անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտավորություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները եւ դրանց կիրառման կարգը, ֆիզիկական եւ իրավաբա-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

նական անձանց կողմից հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների վճարման կարգը, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրավանացնելու պայմանները եւ կարգը»:

**4.8. Իրավաբանական տեխնիկայի միջոցները, որոնք օգտագործվում են սահմանադրական դատարանի կողմից օրենքը կամ այլ իրավական ակտը Սահմանադրությանը հակասող ճանաչող որոշման արդյունքում իրավունքի բացերի առաջացումից խուսափելու համար**

- *Իրավաբանական գույնիկայի ինչպիսի միջոցները է կիրառում սահմանադրական դատարանն օրենքը կամ այլ իրավական ակտը Սահմանադրությանը հակասող ճանաչող որոշման արդյունքում իրավունքի բացերի առաջացումից խուսափելու համար: Սահմանադրական դատարանն որոշման պաշտոնական հրապարակման հետաձգում: Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մընելու ավելի ուշ ժամկետի սահմանում: Սահմանադրական դատարանի կողմից արձագագրում, որ քննարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանում է ժամանակավորապես՝ նշելով, որ երե ակտը չփոփոխվի մինչև որոշակի ժամկետը, ապա այն կհակասի Սահմանադրությանը: Օրենսդրական բացի կապակցությամբ ակտի՝ Սահմանադրությանը հակասող ճանաչում առանց այն իրավունքի համակարգից հանելու: Օրենսդրական բացի հետևանքով ակտի /ակտի դրույթի/՝ Սահմանադրությանը հակասությունն արձանագրելուց խուսափելու համար ակտի /ակտի դրույթի/՝ Սահմանադրությանը համապատասխանող մեկնարանում: Նախկինում զործող իրավական կարգավորման «վերականգնում»: Ընդունում են որոշման այլ մողելներ /քննութագրեր դրանք/*

Համաձայն ՍԴ մասին օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի՝ «Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ժամանակներ հանրության եւ պետության համար, որոնք կխաբարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը: Այդ դեպքում մինչեւ ակտի իրավա-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

բանական ուժը կորցնելը ակտը համարվում է Սահմանադրությանը համապատասխանող»: Ընդ որում, համաձայն նույն հոդվածի 16-րդ մասի՝ «Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր եւ անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետեւաճքները կանխելուն ուղղված միջոցառումները»:

Այսպիսով, հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի եւ ծանր հետեւաճքները հանրության եւ պետության համար, եւ ավելի էական վեստ չպատճառվի մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին եւ ազատություններին:

Մասնավորապես 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ 630 որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետում սահմանադրական դատարանը նշում է. «Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՀՀ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը»:

## 5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԱՐՁԱՎԱԳՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

### 5.1. Օրենսդրի համար ծագող պարտականությունները

- **Սահմանադրական դադարանի որոշման մեջ օրենսդրական բացի առկայության ամրագրումն արդյո՞ք նշանակում է օրենսդրի պարտականություն՝ համապատասխան չեղով լրացնելու իրավական կարգավորման այդպիսի բացը**

Թեպետ ոչ ՀՀ Սահմանադրությունը, ոչ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը չեն պարունակում օրենսդրի՝ ուղղակիորեն ամրագր-

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ված պարտականություն՝ համապատասխան ձևով լրացնելու իրավական կարգավորման այդպիսի բացը, քանի որ ՀՀ Սահմանադրության 75 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է միայն պատգամավորներին և ՀՀ կառավարությանը, այնուամենայնիվ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթները, ինչպես վերը նշվել է, սահմանում են, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին» (հոդված 9), ինչն իմալիցիտ կերպով օրենսդրի և իրավաստեղծ գործունեության մյուս սուբյեկտների վրա դնում է օրենսդրության բացերը լրացնելու պարտականություն՝ հետևելով սահմանադրական դատարանի որոշումներում շարադրված իրավական դիրքորոշումներին:

**- Արդյո՞ք խորհրդարանի կանոնակարգում նախադեսվում է սահմանադրական դատարանի որոշումների կենսագործման հարցերի քննարկություն**

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը չի պարունակում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների կենսագործման հարցերի քննարկմանը վերաբերող որևէ դրույթ:

**- Արդյո՞ք խորհրդարանն օպերատիվ կերպով է արձագանքում սահմանադրական դատարանի այն որոշումներին, որոնցում արձանագրվել են օրենսդրական բացեր**

Գոյություն ունեցող պրակտիկան վկայում է այն մասին, որ խորհրդարանը բավական օպերատիվ է արձագանքում սահմանադրական դատարանի որոշումներին: Ավելին, որոշ ոչ վաղ անցյալի որոշումների արդյունքում Ազգային ժողովի արտահերթ նատաշրջանների ընթացքում համապատասխան փոփոխություններ են կատարվել այն նորմատիվ իրավական ակտերի դրույթներում, որոնք Սահմանադրությանը հակասող են ճանաչվել: Որպես օրինակ կարելի է մատնանշել ՀՀ ընտրական օրենսգիրքը, «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունված օրենքը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքը:

**- Եղե՞լ են, արդյոք, դեպքեր, երբ խորհրդարանը չի կատարել սահմանադրական դատարանի՝ օրենսդրական բացին վերաբերող որոշումները**

Ոչ, չեն եղել:

**- Ինչպես է ապահովում խորհրդարանի՝ սահմանադրական դատարանի որոշումից բխող պարտականության կափարումը**

Այն օրենսդրական ակտում փոփոխությունների նախապատրաստման և ընդունման միջոցով, որի դրույթները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող:

**- Այս բնագավառում սահմանադրական դատարանի լիազորությունները և դերը**

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ «Սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նպաստում է սահմանադրական դատարանի որոշումից բխող՝ խորհրդարանի պարտականության կատարման ապահովմանը, մասնավորապես, նման որոշման ընդունման մասին պաշտոնապես տեղեկացնելու ճանապարհով: Այսպես, քննարկվող օրենքի 65 հոդվածը նախատեսում է, որ «Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները դրանց ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, առաքվում են՝

1) դատավարության կողմերին.

2) Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով, կառավարություն, վճռաբեկ դատարան, մարդու իրավունքների պաշտպանին եւ գլխավոր դատախազին»:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սահմանադրական դատարանի տեղեկագրում»:

Պետք է նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն իր՝ «Որոշումը չկատարելու հետեւանքները» վերտառությամբ 66 հոդվածով սահմանում է, որ «Սահմանադրական դատարանի որոշումը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարմանն արգելք հանդիսանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»:

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Վերջապես, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը կարող է անուղղակի կերպով ազդել խորհրդարանի կողմից համապատասխան միջոցներ ձեռք առնելու վրա՝ օգտագործելով ՍԴ-ի մասին օրենքի 67 հոդվածով սահմանված իր լիազորությունը, որի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է իրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ։ Այն ուղարկվում է պետական և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ»։

Սահմանադրական դատարանի որոշումների՝ Ազգային ժողովի կողմից կատարման ապահովման բնագավառում կարևոր դեր ունեն նաև Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ սահմանադրական դատարանի լիազորությունները, որոնց համաձայն՝ «Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ»։

### **5.2. Իրավաստեղծ գործունեության մյուս սուրյեկտների (օրինակ, պետության գլխի, կառավարության) համար ծագող պարտականությունները**

**- Սահմանադրական դատարանի որոշման մեջ օրենսդրական բացի արձանագրումն արդյո՞ք նշանակում է իրավաստեղծ գործունեության մյուս սուրյեկտների պարտականություն՝ համապատասխան չնոյն լրացնելու իրավական կարգավորման այդպիսի բացը**

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի կողմից անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ, ինչն իմացիալ կերպով իրավաստեղծ գործունեության մյուս սուրյեկտների վրա դնում է օրենսդրության բացերը լրացնելու պարտականություն՝ հետևելով սահմանադրական դատարանի որոշումներում շարադրված իրավական դիրքորոշումներին։

**- Արդյո՞ք այդ սուրյեկտների գործունեությունը կարգավորող ակտերում նախապեսվում է, թե ինչպես են պայմանագրական սուրյեկտների կողմից կենացործվում սահմանադրական դատարանի որոշումները**

Ոչ, չի նախատեսվում։

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

- Արդյո՞ք նշված սուբյեկտներն օպերատիվ կերպով են արձագանքում սահմանադրական դատարանի այն որոշումներին, որոնցում արձանագրված են օրենսդրական բացերը**

Գոյություն ունեցող պրակտիկան վկայում է, որ նշված սուբյեկտները բավական օպերատիվ են արձագանքում սահմանադրական դատարանի որոշումներին:

- Եղե՞լ են, արդյոք, դեպքեր, երբ այդ սուբյեկտները չեն կարող օրենսդրական բացի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումները**

Ոչ, չեն եղել:

- Ի՞նչ չեղով է նշված սուբյեկտների կողմից ապահովվում այդ պարտավորության պարշաճ կապարումը**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ իրավական ակտերի դրույթներում փոփոխություններ կատարելով, ինչպես նաև այն նորմատիվ իրավական ակտերն ուժը կորցրած ճանաչելով, որոնք ապահովել են անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումը: Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասը նախատեսում է, որ «Անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ»:

- Այդ բնագավառում սահմանադրական դատարանի լիազորությունները և դերը**

Սահմանադրական դատարանի լիազորությունների և դերի մասին առավել մանրամասն տես 5.1. կետը:

## **6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

- Կարելի՞ է, արդյոք, նման հետազոտությունները դիլարկել որպես սահմանադրական դատարանի գործունեության նշանակալից ոլորդ**

## **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՈՆԴԻՐՆԵՐ**

Հաշվի առնելով այն փաստը, որ 2006թ. հուլիսի 1-ից մինչեւ 2007թ. սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված 25 անհատական դիմումներից 13 դիմումում վիճարկվել է օրենսդրական բացի հիման վրա իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասությունը, կարելի է փաստել, որ նշված ոլորտը հանդիսանում է ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ամենաարդիական ոլորտը:

### **- Արդյո՞ք սահմանադրական դատարանն այդպիսի հեղազողության համար ունի բավարար իրավարանական գործիքներ**

Այս հիմնավորվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթներով: Մասնավորապես, համաձայն:

- ՍԴ մասին ՀՀ օրենքի 19 հոդվածի՝ «Գործի բոլոր հանգամանքները սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով եւ գործում առկա այլ նյութերով»:

- ՍԴ մասին ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի՝ «Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան»:

- ՍԴ մասին ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի՝ «... որոշում ընդունելիս սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով»:

1) իրավական ակտի պահանջվող տեսակը.

2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պահպանան եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, որանց սահմանափակումների բույլատրելիությունը.

4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովածությունը.

5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների բույլատրելի սահմանները.

6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

- ՍԴ մասին ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի՝ «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որեւէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը։ Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ սահմանադրական դատարանը կարող է Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաև այդ դրույթները»։

### ***Այդպիսի գործերով սահմանադրական դատարանի որոշումներն ինչպիսի ազդեցություն ունեն Ձեր երկրում իրավասպեկտ գործընթացի վրա***

Պրակտիկան ցույց է տալիս, որ սահմանադրական դատարանի որոշումներն ունեն էական դրական ազդեցություն իրավաստեղծ գործունեության վրա։ Մասնավորապես, սահմանադրական դատարանի 18.04.2006թ. ՍԴ-630 որոշման ազդեցությամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականին ընդունվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը, որը ՀՀ Նախագահի կողմից սոորագրվել է և հրապարակվել 12. 12. 2006 թվականին։ Իսկ ՀՀ կառավարությունը 17.05.2007թ. ընդունել է թիվ 611-Ն որոշումը։

Սահմանադրական դատարանի 04.10.2006թ. ՍԴ-649 որոշման ազդեցությամբ ՀՀ կառավարությունը 01.03.2007թ. ընդունել է թիվ 369-Ն որոշումը։

Սահմանադրական դատարանի 18.10.2006թ. ՍԴ-652 որոշման ազդեցությամբ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 10.07.2007թ. ընդունել է թիվ 01 որոշումը։

Սահմանադրական դատարանի 07.11.2006թ. ՍԴ-664 որոշման ազդեցությամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 01.02.2007թ. ընդունել է թիվ 2 և 4 որոշումները։

Սահմանադրական դատարանի որոշումներն ունեն էական դրական ազդեցություն ոչ միայն իրավաստեղծ, այլև իրավակիրառ պրակտիկայի վրա։



**ԵՐԻՍԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ**

**Հայկ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Իրավաբան

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՐՊԵՍ ՀԱՍՏԱԿՐԳ**

Ժողովրդավարական իրավական պետությունում իր բացառիկ տեղն է գրավում սահմանադրությունը՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված հիմնական նորմատիվ իրավական ակտ։ Իրավական պետության հիմնական սկզբունքները, միաժամանակ լինելով իրավական պետությանը ներկայացվող հիմնական պահանջները, կարող են իրականացվել ի շնորհիվ սահմանադրական պետության, որն ըստ Ֆ.Կոկոչկինի այնպիսի պետություն է, որտեղ երաշխափորվում են իշխանությունների բաժանումը և դրանց ենթարկվելը բացառապես իրավունքին, իսկ իրավունքն իր հերթին ենթարկված է իրավունքի սկզբնադրյուրին՝ ժողովրդական իրավունքին<sup>1</sup>։ Նման երաշխիքները պարունակվում են հենց սահմանադրության մեջ։

Այսպիսով, իրավական պետության կարևորագույն սկզբունքներից է նաև նորմատիվ իրավական ակտերի համակարգում Սահմանադրության գերակայությունը, նրա անմիջական և ուղղակի ներգործությունը։ Այսուղից բխում է, որ սահմանադրականությունը իրականում գործող իրավունքի համակարգ է, որն ապահովում է իրական Սահմանադրության առկայությունը, նրա գերակայությունը և անմիջական ներգործությունը պետության ողջ տարածքում, ինչպես նաև նրա ապահովումն ու պաշտպանությունը. դա ոչ միայն իրավական աշխարհայացք է, գիտական տեսություն, այլև նորմատիվ իրավական համակարգ, ժողովրդի իրավական մշակույթի ասպեկտ<sup>2</sup>։ Պատահական չէ, որ քաղաքացիական հասարակության առջև պետության հիմնական պարտականություններից մեկն էլ հենց Սահմա-

<sup>1</sup> H.B. Витрук. Конституционное правосудие. - М. 2005, т. 39-42:

<sup>2</sup> H.B. Витрук. Конституционное правосудие в России. - М. 2001, т. 58:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

նայրության մեջ քաղաքացիական հասարակության կարևորագույն սկզբունքների և գաղափարների ամրագրումը, դրանց իրականացումն ու պաշտպանությունն է<sup>3</sup>:

Չանի որ Սահմանադրության գերակայությունն ու անմիջական ներգործությունն ինքնարերարար չեն իրականացվում, իսկ Սահմանադրության սկզբունքներն ու նորմերը հաճախ կարող են խախտվել, ուստի պետությունները ստեղծում են Սահմանադրության իրավական պաշտպանության մի ամբողջ համակարգ: Ընդ որում, սահմանադրության պաշտպանությունն ակտիվ գործողությունների համակարգ է, որն ընդգրկում է իրավասու պետական մարմիններին վերապահված համապատասխան լիազորությունների իրականացում և ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից իրավական պաշտպանության միջոցներին դիմելը, եթե խախտվել են վերջիններիս իրավունքներն ու ազատությունները<sup>4</sup>:

Միաժամանակ անընդունելի է այն մոտեցումը, որի համաձայն սահմանադրական վերահսկողությունը նույնականացվում է սահմանադրական վերահսկողության դատական համակարգի հետ: Հարկ է նշել գրականության մեջ տեղ գտած այն մոտեցումը, ըստ որի սահմանադրական վերահսկողությունը չի կարող սահմանափակվել միայն դատական վերահսկողության շրջանակներով. այստեղ պետք է նկատի ունենալ նաև օրենսդիր և գործադիր իշխանությունների գործառնական դերը<sup>5</sup>:

Սահմանադրության պաշտպանության համակարգը, մասնավորապես սահմանադրական վերահսկողության համակարգը ընդգրկում է հանրային իշխանության մի շարք մարմիններ, այդ թվում՝ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված և ոչ մասնագիտացված մարմիններ:

Ընդ որում, նման տարանջատման հիմքը այս բնագավառում հիշյալ մարմինների գործունեության ոլորտում սահմանադրական վերահսկողության դերն է ու նշանակությունը: Եթե մասնագիտացված մարմինների համար սահմանադրական վերահսկողությունը գործունեության միակ գործառույթն է, ապա ոչ մասնագիտացված մարմինների դեպքում այն կազմում է գործունեության հիմնական ուղղություններից միայն մեկը, ուստի այդ մարմինների կողմից իրականացվող պաշտպանությունը հաճախ կոչվում է ընդիհանուր կամ համաքաղաքական սահմանադրական վերահսկողություն:

Միաժամանակ ձևական առումով գրված Սահմանադրության բացակայությունն, ինչպես օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, ամենահին էլ չի կարող նշանակել ընդիհանրապես սահմանադրական վերահսկողության՝ որպես հասարակական հարաբերությունների կանոնակարգված հավասարակշ-

<sup>3</sup> Конституционное и муниципальное право. N 16, 2007, էջ 5:

<sup>4</sup> H.B. Витрук. Конституционное право судов, էջ 47:

<sup>5</sup> Գագիկ Հարությունյան. Սահմանադրական վերահսկողություն. Երևան 1997, էջ 18:

## ՎԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ոությունն ապահովող միջոցի բացակայություն, ըստ այդմ էլ անհրաժեշտ է տարրերակել համակարգված և չհամակարգված սահմանադրական վերահսկողություն<sup>6</sup>:

Սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների թվին են դասվում սահմանադրական դատարանները և կվազիդատական մարմինները, ինչպես օրինակ՝ Ֆրանսիայի կամ Ղազախստանի սահմանադրական խորհուրդները, որոնց վերահսկողությունը որպես կանոն նախնական է և իրականացվում է հատուկ ընթացակարգով: Կվազիդատական մարմինների որոշումները կրում են նախնական և խորհրդատվական բնույթ, այսինքն՝ կարող են շրջանցվել իրավասու մարմնի, օրինակ՝ պառլամենտի կողմից: Սահմանադրության առավել իրական և արդյունավետ պաշտպանությունն իրականացվում է մասնագիտացված (սահմանադրական) դատարանների կողմից:

Սահմանադրական վերահսկողությունը Սահմանադրության՝ որպես երկրի հիմնական օրենքի կիրառման առավել էական երաշխիքներից մեկն է, որը կարևոր դեր է խաղում սահմանադրական իրավունքի՝ որպես իրավունքի ճյուղի և ողջ ներպետական իրավունքի համակարգվածությունն ապահովելու գործում<sup>7</sup>:

Սահմանադրական վերահսկողությունը՝ որպես պետական իրավասու մարմինների գործունեություն՝ ուղղված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրությանը համապատասխանության ստուգմանը, այս կամ այն չափով իրականացվում է պետական տարրեր մարմինների կողմից<sup>8</sup>: Դրանց թվում են պետության գլուխը, պառլամենտը, կառավարությունը, մարդու իրավունքների պաշտպանը, դատախազությունը, ընդիհանուր իրավասության դատարանները և այլ պետական մարմիններ, որոնք ընդիհանուր առնամբ համարվում են սահմանադրական վերահսկողության ոչ մասնագիտացված մարմիններ<sup>9</sup>:

Այսինքն՝ սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ իրենից ներկայացնում է իշխանության բոլոր երեք քևերը ներկայացնող տարրեր իրավասություն ունեցող պետական մարմինների գործառույթների բարդ ու փոխկապակցված համակցություն, որն ուղղված է Սահմանադրությամբ և օրենքով նախանշված նապատակների կենսագործմանը: Սահմանադրական վերահսկողությունը, անմիջականորեն առնչվելով Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների ու նորմերի պահպանմանը, ուղղակիորեն կապված է նշված ոլորտում իշխանության երեք

<sup>6</sup> Գագիկ Հարուրյումյան. Սահմանադրական վերահսկողություն. Երևան 2002, էջ 15-16:

<sup>7</sup> В.Н. Шаповал. Сравнительное конституционное право. Киев 2007, էջ 413:

<sup>8</sup> Г.Г. Арутюнян, М.В. Баглай. Конституционное право. Энциклопедический словарь. - М. 2006, էջ 221:

<sup>9</sup> Г.Г. Арутюнян. Конституционный суд в системе государственной власти. Ереван 1999, էջ 71-72:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

թևերի լիազորությունների հավասարակշռությունն ապահովելու, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ապահովման խնդրի հետ: Հետևաբար, սահմանադրական վերահսկողության հիմնական խնդիրը, ինչպես դա ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի<sup>10</sup> 1-ին հոդվածում, Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովումն է:

Սահմանադրական մասնագիտացված վերահսկողության հիմնական տարրերից են՝

1. մասնագիտացված վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեության միակ կամ հիմնական ուղղությունը հենց սահմանադրական վերահսկողությունն է,

2. այս մարմինները մեծամասամբ ձևավորվում են իշխանության օրենսդիր և գործադիր թևերի համատեղ կամահայտնության արդյունքում,

3. նրա կազմում որպես կանոն կարող են ընդգրկվել նաև ոչ իրավաբաններ,

4. այս մարմինները, եթե նույնիսկ ընդգրկվում են դատական համակարգի մեջ, ապա այդ համակարգում ինքնավար դեր ունեն,

5. նրանց գործունեության հիմնական ձևը սահմանադրական արդարադատությունն է, նույնիսկ կազմական մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են որոշակի հատուկ դատավարական կանոններով (ընթացակարգով),

6. ունեն վերջնական որոշումների ընդունման բացառիկ մենաշնորհ, այդ որոշումները հիմնականում բողոքարկման ենթակա չեն<sup>11</sup>:

Պետք է համաձայնել գրականության մեջ տեղ գտած այն կարծիքի հետ, որի համաձայն սահմանադրական արդարադատության ինստիտուտը ժողովրդավարական իրավական պետության անքածանելի տարրն է, սահմանադրության իրավական պաշտպանության մեխանիզմի գլխավոր բաղադրիչը<sup>12</sup>:

Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության (այսինքն՝ Սահմանադրություն) 93-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է:

<sup>10</sup> «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք. ՀՀ ԹՏ 32 (487) 21.06.2006:

<sup>11</sup> Գ. Գ. Արյունյան. Եշված աշխատությունը, էջ 72-74:

<sup>12</sup> Ю.А. Юдин, Ю. Л. Шульженко. Конституционное правосудие в федеративном государстве. - М. 2000, էջ3.

## ԳԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Հարկ է առավել մանրամասն անդրադառնալ սահմանադրական վերահսկողության ոչ մասնագիտացված մարմիններին առանձին-առանձին:

**Պետության գլուխ.** Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Նա հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականու գործունեությունը: Հանրապետության Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Ըստ Սահմանադրության 55-րդ հոդվածի Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի կողմից վերատին ընդունված օրենքը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կատեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը, մինչև միջազգային պայմանագրի վավերացումը Հանրապետության Նախագահը կարող է դիմել սահմանադրական դատարան, որը որոշում է միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Հանրապետության Նախագահը նաև նշանակում է սահմանադրական դատարանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահ չնշանակելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ, արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաբննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին: Բացի այդ, ըստ Սահմանադրության 86-րդ հոդվածի Հանրապետության Նախագահը կարող է կատեցնել կառավարության որոշումների գործողորությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար: Միաժամանակ Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նա-

խագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ: Հանրաքեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ, իսկ 112-րդ հոդվածի համաձայն օրենքները հանրաքեն են դրվում Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկով՝ Սահմանադրության 111-րդ հոդվածով սահմանված կարգով:

Այսպիսով, Հանրապետության Նախագահի նման լայն լիազորությունները բավարար իրավական հիմք են ստեղծում նրա կողմից սահմանադրական վերահսկողության ոլորտում ակտիվ դերակատարում ունենալու իմաստով:

**Պառամենտ.** Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը: Ազգային ժողովը նշանակում է սահմանադրական դատարանի հիմք անդամ, սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը բարփուր մնալու հետո՝ երեսնօրյա ժամկետում, սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ: Բացի այդ, Ազգային ժողովն ընտրում է մարդու իրավունքների պաշտպանին՝ վեց տարի ժամկետով: Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իսկականության պահպանությունը: Ազգային ժողովը, լինելով ժողովրդի ինքնիշխանության մարմնավորում և հանդիսանալով ներկայացուցչական մարմին, իրականացնում է ոչ միայն նախնական, այլև հետագա վերահսկողություն, քանի որ օժտված է օրենսդիր իրավասությամբ, որը ենթադրում է ոչ միայն օրենքներ ընդունելու, այլև դրանք փոփոխելու և չեղյալ հայտարարելու իրավունքը:

Ազգային ժողովի կողմից իր սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումն իր հերթին կարող է զգալի ազդեցություն ունենալ երկրում արդյունավետ սահմանադրական վերահսկողության համակարգի ձևավորման գործընթացում: Մասնավորապես, Սահմանադրության 117-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց (06.12.2005թ.) հետո Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմա-

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

նադրության փոփոխություններին: Սահմանադրությամբ Ազգային ժողովի վրա դրված այս պարտականության ժամանակին ու պատշաճ կատարումն անկախած սահմանադրական վերահսկողության լավագույն օրինակն է: Սակայն գոյություն ունեն դեռևս օրենքներ, որոնք չեն համապատասխանեցվել Սահմանադրությանը, օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը: Մասնավորապես համաձայն Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1 կետի, սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը: Մինչդեռ ՀՀ ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով սահմանադրական դատարան կարելի է դիմել արդյունքների պաշտոնական իրավարակման պահից յոթնօրյա ժամկետում: Միաժամանակ չպետք է մոռանանք, որ հենց Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն, Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն, իսկ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը:

Ընդհանուր իրավասության դատարաններ, գլխավոր դատախազ. Իրավական պետությունում անկախ դատական իշխանության գործունեության հիմնական ուղղություններից մեկն էլ հենց սահմանադրական վերահսկողությունն է, ընդ որում, սահմանադրական վերահսկողության բարձրագույն ձևը սահմանադրական արդարադատությունն է, որի ընթացքում դատարանները, լուծելով հասարակական հարաբերությունների մասնակիցների կոնկրետ վեճերը, պաշտպանում են սահմանադրությունը և օրենքները, անձանց իրավունքներն ու ազատությունները, միաժամանակ իրականացնում են սահմանադրական վերահսկողություն՝ ստուգելով օրենքների համապատասխանությունը սահմանադրությանը<sup>13</sup>:

Այսպիսով, սահմանադրական դատական վերահսկողությունը իշխանության օրենսդիր, գործադիր և դատական համապատասխան մարմինների ակտերի, որոշումների և գործողությունների՝ սահմանադրության համապատասխանության ստուգումն է, որտեղ վճռորդ դերը պատկանում է դատավարական հատուկ ընթացակարգով իրականացվող սահմանադրական արդարադատությանը:

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի համաձայն իրենց իրավասությանը վերապահված գործերով սահմանադրական դատարան դիմում են դատարանները, ինչպես նաև գլխավոր դատախազը, եթե գտնում են, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի են-

<sup>13</sup> H.B. Витрук. Конституционное право судов. - М. 2005, т. 50:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

քակայությանը վերապահված որևէ նորմատիվ բնույթ ունեցող իրավական ակտի դրույթը կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են Սահմանադրությանը: Դատարանները սահմանադրական դատարան դիմելուց առաջ պարտավոր են, իսկ զիսավոր դատախազը կարող է կասեցնել կոնկրետ գործի վարույթը մինչև սահմանադրական դատարանի ընդունած որոշումն ուժի մեջ մտնելը: Դատարանները կարող են դիմել սահմանադրական դատարան համապատասխան գործով վարույթը Ակավելուց մինչև այդ գործով ըստ Էության որոշում ընդունելու պահը, իսկ զիսավոր դատախազը՝ տվյալ գործն իր վարույթ ընդունելուց հետո՝ մինչև այն օրենքով սահմանված կարգով իրավասու դատարան ուղարկելը: Դատարանները և զիսավոր դատախազը վարույթը կասեցնելու դեպքում դիմումները կարող են ներկայացնել իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Դատարան հասկացության տակ ընդգրկվում են ընդհանուր իրավասության, արքիտրաֆային (հաշտարար), մասնագիտացված դատարանները, ընդ որում, դատարան ասելով հասկանում ենք նաև դատավորին անձնապես՝ միանձնյա հանդես գալու դեպքում: Դատարանները կարող են դիմել սահմանադրականությունը ստուգելու հարցով իրենց վարույթում գտնվող բոլոր գործերով՝ քրեական, քաղաքացիական, վարչական և այլ, սակայն միայն իրավունքի և ոչ երբեք գործի փաստական հանգամանքների կապակցությամբ<sup>14</sup>:

Սահմանադրական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների փոխիհարաբերությունների հարցում միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է երկու հիմնական մոտեցումների առկայության մասին՝

1. նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության որոշումը բացառապես վերապահված է սահմանադրական դատարանին, իսկ մյուս դատարանները հանդես են գալիս միայն որպես դիմող կողմ, օրինակ՝ Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Իսպանիա, Հայաստանի Հանրապետություն,

2. բոլոր դատարաններն ել իրականացնում են սահմանադրական վերահսկողություն, բայց եթե ակտը բողոքարկվում է, ապա հետագա վերջնական որոշման ընդունումը պատկանում է բացառապես սահմանադրական դատարանին, օրինակ՝ Պորտուգալիա<sup>15</sup>:

Միաժամանակ հարկ է անդրադառնալ նաև Վարչական դատավարության օրենսգրքի<sup>16</sup> ընդունմանք պայմանավորված հետևյալ հանգաման-

<sup>14</sup> H.B.Vitruk. Կոնստիտուցիոնու որացուցաւու. - M. 1998, էջ 311-312:

<sup>15</sup> Г.Г.Արյունյան. Նշված աշխատությունը, էջ 76:

<sup>16</sup> Ընդունված է 2007 թվականի նոյեմբերի 28-ին:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

քին: Համաձայն Սահմանադրության 100-րդ և 101-րդ հոդվածների սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Այս դեպքերում սահմանադրական դատարան կարող է դիմել Հանրապետության Նախագահը, պատգամավորների առնվազն մեկ իինգերորդը, կառավարությունը, մարդու իրավունքների պաշտպանը՝ վերը թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով, ընդ որում, մարդու իրավունքների պաշտպանը կարող է վիճարկել միայն նորմատիվ ակտերի, իսկ մնացած սուբյեկտները՝ նաև անհատական բնույթ ունեցող իրավական ակտերի սահմանադրականությունը: Վարչական դատավարության օրենսգրքը փաստորեն այս ցանկից դուրս մնացած գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցերով վերահսկողության գործառույթը վերապահել է ՀՀ վարչական դատարանին, որը առաջին ատյանի մասնագիտացված դատարան է: Միաժամանակ Դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վճռաբեկ դատարանը բողոքի իիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերանայում է վերաքննիչ և վարչական դատարանների դատական ակտերը: Այս նորմը որոշակի մրցակցության մեջ է գտնվում Սահմանադրության 92-րդ և 93-րդ հոդվածների հետ, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, իսկ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը:

Վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը.

1) գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը.

2) Հայաստանի Հանրապետության Նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ որոշումների, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Հայաստանի Հան-

## ԴԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

բապետության Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն գերատեսչական ակտերի թվին են դասվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշումները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի որոշումները և իրահանգները, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշումները, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումները, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշումները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումները, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, նախարարների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների դեկավարների հրամանները, մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումները կամ կարգադրությունները:

Ըստ որում, նշված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով, մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված իր իրավունքները: Այդ գործերով վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի նորմատիվ ակտով խախտվել են պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ ակտերի դեմ վարչական դատարան կարող է դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանը:

Միաժամանակ խոսուն են ՀՀ սահմանադրական դատարանի ամփոփ վիճակագրության տվյալները, որոնց համաձայն 2007 թվականին ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրվել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 336 դիմում, որոնցից ՀՀ Նախագահի կողմից՝ 39 դիմում, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 0 դիմում, ՀՀ կառավարության կողմից՝ 0 դիմում, ՀՀ դատարանների կողմից՝ 0 դիմում, ՀՀ գլխավոր դատախազի կողմից՝ 0 դիմում, Մարդու իրավունքների պաշտպանը մարդու իրավունքների պաշտպանը:

## ԳԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

թի պաշտպանի կողմից՝ 2 դիմում և այլն<sup>17</sup>: Նշված սուբյեկտների կողմից ցուցարերված նման պասխության պայմաններում անհնար է խոսել սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգի առկայության մասին, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության պայմաններում, իսկ դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտները ակնհայտորեն չեն օգտվում իրենց վերապահված իրավունքներից: Այս երևույթի առկայությունը հատկապես դատական համակարգում ակնհայտորեն վկայում է Սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրված Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժի և նրա նորմերի անմիջական գործողության մասին դրույթների անտեսման մասին: Դատարանն արդարադատություն իրականացնելիս հաճախ նույնիսկ չի կիրառում սահմանադրական այս կամ այն նորմը, այլ ուղղակի գործը լուծում է միայն նյութական և դատավարական որոշակի նորմերից ելնելով:

Այսպիսով՝ սահմանադրական վերահսկողությունը որպես համակարգ հանդես է գալիս որպես իշխանության երեք թևերը ներկայացնող ու տարբեր իրավասությամբ օժտված պետական համապատասխան մարմինների գործառույթների բարդ ու փոխկապակցված շարունակական գործնարաց, որն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների ու նորմերի պահպանմանը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիքների կենսագործմանը, իշխանության երեք թևերի միջև լիազորությունների հավասարակշռությունն ապահովելուն:

<sup>17</sup> Տես «Դատական սահմանադրական վերահսկողության հիմնական առանձնահատկությունները 2007 թվականին, ՀՀ սահմանադրական դատարանի ամփոփ վիճակագրություն»:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

2007 թվականի Հոկտեմբերի 15-ին Երեվանում Սահմանդրության՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

**Քաղ. Երեւան**

**22 հունվարի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 15-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև մաքսային գործերում վարչական փոխօգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2007 թվականի դեկտեմբերի 6-ին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Խաչարյանի գրավոր բացարությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաբղերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 15-ին Երեւանում՝ նպատակ ունենալով զարգացնել բարեկամական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի Հանրապետության միջև մաքսային գործի ոլորտում համագործակցության միջոցով:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախարանից, 28 հոդվածներից, վերջաբանից եւ հավելվածից: Համաձայնագրում տրված են դրանում օգտագործվող հիմնական հասկացությունների սահմանումները, համաձայնագրի գործողության ոլորտը, մանրամասն նկարագրված են փորձի փոխանակման եւ վարչական օգնության ցուցաբերման, տեղեկատվության փոխանակման սկզբունքները, տեղեկատվության առանձին տեսակները:

3. Համաձայնագրում սահմանված են օգնության հատուկ ձեւերը, հստակորեն լուսաբանված են հարցումների ձեւն ու բովանդակությունը, դրանց փոխանակման եւ կատարման մանրամասները, նշված են բացառություն հանդիսացող դեպքերը եւ ստացված տեղեկատվության օգտագործման ու գաղտնիության պահպանման կարգը:

4. Համաձայնագիրը նաեւ կարգավորում է մի Պայմանավորվող կողմի տարածքում մյուս Պայմանավորվող կողմի պաշտոնատար անձանց գտնվելու, ինչպես նաեւ մի Պայմանավորվող կողմի դատական կամ վարչական մարմիններում մյուս Պայմանավորվող կողմի փորձագետների ու վկաների հանդես գալու կարգը:

5. Համաձայնագրի հոդված 22-ը նվիրված է Պայմանավորվող կողմերի փոխադարձ ֆինանսական պարտավորություններին, ըստ որի՝ Պայմանավորվող կողմերը հրաժարվում են համաձայնագրի կատարման ընթացքում ծագած ծախսերի հատուցման բոլոր պահանջներից, բացառությամբ հայցվող մաքսային ծառայությունում չաշխատող փորձագետների, բարգմանիշների ու վկաների աշխատանքի վարձատրման հետ կապված ծախսերի:

6. Համաձայնագրում նախատեսված են առանձին դրույթներ՝ թմրադեղերի, հոգեներգործուն նյութերի եւ բաղադրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի, ինչպես նաեւ վերահսկելի մատակարարման հիմնախնդիրների վերաբերյալ:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Համաձայնագրում նաեւ նախատեսված են դրույթներ՝ վիճելի հարցերի կարգավորման, ինչպես նաեւ համաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ դրա գործողության դադարեցման վերաբերյալ:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին համահունչ ապահովում են Պայմանավորվող կողմերի միջև արտաքին հարաբերությունների իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

### **Ո Ր Ռ Ծ Ե Յ .**

1. 2007 թվականի հոկտեմբերի 15-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Վրաստանի կառավարության միջև մաքսային գործերում վարչական փոխօգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 հունվարի 2008 թվականի  
ՍՊԸ- 729**



ՀԱՆՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՎԱՐԺԱՎԱՅՐՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՆՑԱՎՈՐ ճԱՆԱՊԱՀՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ,  
ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ, ԱՌԳՐԱՎՄԱՆ ՈՒ ԲՈՆԱԳՐԱՎՄԱՆ ԵՎ  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ  
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐՈՎ) ԱՄՏԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

22 Խունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի մայիսի 16-ին Վարշավյում ստորագրված՝ Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահարենչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում (կից հայտարարություններով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարանում 03.12.2007թ. նույրագրված դիմումը:

Ուսումնամիջելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան (կից հայտարարություններով: (այսուհետ՝ կոնվենցիա) եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրել է 2005թ. մայիսի 16-ին Վարշավյում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առզրավման ու բռնագրավման եւ ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան ստորագրել է 2005թ. նոյեմբերի 17-ին:

2007թ. նոյեմբերի 21-ի դրությամբ կոնվենցիան ստորագրել է 27 պետություն, վավերացրել՝ 4 պետություն:

Կոնվենցիայի նպատակն է խորացնել այդ ոլորտում պետությունների միջև համագործակցությունը, ստեղծել մի շարք արդյունավետ եւ լրացուցիչ մեխանիզմներ փողերի լվացման եւ ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարն ուժեղացնելու բնագավառում, հստակեցնել ու կատարելագործել «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առզրավման եւ բռնագրավման մասին» 1990 թվականի նոյեմբերի 8-ի եվրոպական կոնվենցիայով նախատեսված մեխանիզմները՝ հաշվի առնելով, որ ահարեկչությունը կարող է ֆինանսավորվել ոչ միայն հանցավոր ճանապարհով ստացված եւ լվացված փողերով, այլ նաև օրինական գործունեությունից ստացված եկամուտներով:

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է.

- ձեռնարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան կիրառել կոնվենցիայով ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով սահմանված դրույթները,

- երաշխավորել, որ կարող է հետախուզել, հետապնդել, հայտնարերել, սառեցնել, առզրավել եւ բռնագրավել օրինական կամ հանցավոր ծագում ունեցող այնպիսի գույքը, որը նախատեսված է եղել կամ որեւիցե ձեռով օգտագործել է, մասնակիորեն կամ ամբողջությամբ, ահարեկչության ֆինանսավորման նպատակներով, ինչպես նաև նշված հանցանքից ստացված եկամուտները, եւ այդ ուղղությամբ ապահովել հնարավոր առավելագույն համագործակցություն կոնվենցիայի մյուս մասնակիցների հետ (հոդված 2, կետ 2),

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- ձեռնարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել գործիքների եւ եկամուտների, ինչպես նաև այդ եկամուտներին եւ լվացնան ենթարկված գույքին համարժեք գույքի բոնագրավում (հոդված 3, կետ 1),

- ձեռնարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան ՀՀ օրենսդրությամբ ծանր հանցագործություն համարվող մեկ կամ մի քանի արարք կատարած անձանցից պահանջել, որպեսզի նրանք ներկայացնեն բոնագրավման ենթակա եկամուտների կամ գույքի ծագման վերաբերյալ տեղեկություններ, եթե նման պահանջը համապատասխանում է ՀՀ օրենսդրության սկզբունքներին (հոդված 3, կետ 4),

- ընդունել այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել արագորեն հայտնաբերելու, որոնելու, սառեցնելու կամ առգրավելու կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ բոնագրավման ենթակա գույքը, որպեսզի, մասնավորապես, առավել հեշտ լինի իրականացնել հետագա բոնագրավումը (հոդված 4),

- ընդունել այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապահովելու, որպեսզի սառեցման, առգրավման եւ բոնագրավման միջոցառումները ներառեն նաև այնպիսի գույք, որն ստացվել է եկամուտների փոխակերպման արդյունքում, օրինական աղբյուրներից ստացված գույքը՝ համախառն եկամուտների գնահատված արժեքի չափով, այն շահույթը կամ շահը՝ եկամուտներին հավասարաչափ ձեւով եւ չափով, որն ստացվել է եկամուտներից, եկամուտների փոխակերպման արդյունքում ստացված գույքից կամ այն գույքից, որին խառնվել են հանցագործությունից ստացված եկամուտները՝ այդ եկամուտների գնահատված արժեքի չափով (հոդված 5),

- ձեռնարկել այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնցով հնարավոր կլինի ապահովել, որ կոնվենցիայի 4-րդ եւ 5-րդ հոդվածներին համապատասխան սառեցված կամ առգրավված գույքը պատշաճ կերպով տնօրինվի (հոդված 6),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնցով ՀՀ դատարանները կամ այլ իրավասու մարմինները կստանան լիազորություններ պահանջելու բանկային, ֆինանսական կամ առեւտրային փաստաթղթերի տրամադրում կամ առգրավում՝ կոնվենցիայի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ հոդվածներով սահմանված գործողություններն իրականացնելու նպատակով, ինչպես նաև չիրաժարվել կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթներով սահմանված գործողություններն իրականացնելուց՝ բանկային գաղտնիքի պատճառաբանությամբ (հոդված 7, կետ 1),

- չխախտելով կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-իմ կետով սահմանված դրույթները՝ ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի պարզվի, թե արդյոք ֆիզիկական կամ իրավաբանական անձը հանդիսանում է ՀՀ տարածքում գտնվող որևէից բանկում բացված ցանկացած տեսակի՝ մեկ կամ մի քանի հաշիվների օգտագործողը կամ շահառու սեփականատերը, իսկ հանդիսանալու դեպքում ձեռք բերի նույնականացված հաշիվների բոլոր տվյալները, ձեռք բերի այն սահմանված բանկային հաշիվների եւ բանկային գործարքների վերաբերյալ մանրամասները, որոնք իրականացվել են որոշակի ժամանակահատվածում, մեկ կամ մի քանի որոշակի հաշիվների միջոցով՝ ներառյալ այդ հաշիվներին փոխանցումներ կատարած եւ դրանցից փոխանցումներ ստացած այլ հաշիվների վերաբերյալ մանրամասները, մոնիթորինգի ենթարկի որոշակի ժամանակահատվածում մեկ կամ մի քանի նույնականացված հաշիվների միջոցով իրականացվող բանկային գործարքները, ինչպես նաև ապահովի, որ բանկերն իրենց շահագրգիռ հաճախորդների կամ երրորդ անձանց համար չբացահայտեն կոնվենցիայի հոդված 7, կետ 2-ի «ա», «բ» եւ «զ» ենթակետերի համաձայն տեղեկատվություն որոնելու կամ ձեռք բերելու, ինչպես նաև հետաքննություն իրականացնելու փաստը (հոդված 7, կետ 2),

- քննարկել նաև բանկ չհանդիսացող ֆինանսական հաստատություններում բացված հաշիվների վրա կոնվենցիայի հոդված 7, կետ 2, մաս 1-ի դրույթը տարածելու հարցը (հոդված 7, կետ 2),

- քննարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ ընդունելու հնարավորությունը, որոնք թույլ կտան կիրառել եկամուտների հայտնաբերումը եւ հետապնդումը, ինչպես նաև համապատասխան ապացույցների հավաքագրումը հեշտացնող հատուկ քննչական միջոցներ, որոնցից են դիտարկումը, հեռահաղորդակցության գաղտնալսումը, մուտքը համակարգչային համակարգեր եւ որոշակի փաստաթղթեր ներկայացնելու պահանջը (հոդված 7, կետ 3),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնցով հնարավոր կիմի ապահովել, որպեսզի այն շահագրգիռ կողմերը, որոնց առնչությամբ կիրառվել են կոնվենցիայի 3-րդ, 4-րդ, 5-րդ հոդվածներով եւ III բաժնի այլ համապատասխան դրույթներով սահմանված միջոցները, ունենան իրենց իրավունքների պաշտպանության արդյունավետ իրավամիջոցներ (հոդված 8),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնցով հնարավոր կիմի ՀՀ օրենսդրության ներքո իբրեւ հանցատեսակ սահմանել դիտավորությամբ կատարված հետեւյալ գործողությունները՝ գույքի փոխարկումը կամ փոխանակումը, եթե հայտնի է այդ գույքի եկամուտ հանդիսանալու փաստը՝ գույքի անօրինական ծագումը թաքցնելու կամ քողարկելու, ինչպես նաև նախորդող հանցատեսակի կատարման մեջ ներգ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բավական անձին իրավական հետեւանքներից խուսափելու հարցում աջակցելու նպատակով, գույքի իրական բնույթի, աղյուսի, գտնվելու վայրի, օտարման, փոխադրման, գույքի նկատմամբ որեւիցն իրավունքի կամ սեփականատիրության բաքցնելը կամ քողարկելը, եթե հայտնի է այդ գույքի եկամուտ հանդիսանալու փաստը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական սկզբունքներին եւ իրավական համակարգի հիմնական հասկացություններին համապատասխան՝ գույքի ձեռքբերումը, տիրապետումը կամ օգտագործումը՝ եթե ստանալու պահին հայտնի է եղել այդ գույքի եկամուտ հանդիսանալու փաստը, եւ կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված հանցանքներին կամ դրանց իրականացման փորձին մասնակցելը, միանալը կամ հանցավոր համաձայնության գալը, ինչպես նաև այդ հանցանքների իրականացման աջակցելը, դրդելը, նպաստելը կամ խորհրդակցելը (հոդված 9, կետ 1),

- ապահովել, որպեսզի փողերի լվացման համար նախորդող հանդիսացող հանցանքները ներառեն այն արարքները, որոնք տեղի են ունեցել մեկ այլ պետությունում, որտեղ դրանք հանցանք են համարվում, եւ կհամարվեին նախորդող հանցանք, եթե կատարված լինեին ՀՀ-ում (հոդված 9, կետ 7),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կապահովեն, որ իրավաբանական անձինք պատասխանատվություն կրեն կոնվենցիայով սահմանված՝ փողերի լվացման քրեական հանցանքների համար, որոնք, ի շահ այդ անձանց, կատարվել են տվյալ իրավաբանական անձի կազմում առաջատար դիրք զբաղեցնող ֆիզիկական անձի կողմից, որը գործել է ինքնուրույն կամ իբրեւ իրավաբանական անձի մարմնի անդամ՝ օգտագործելով հետեւյալը՝ իրավաբանական անձը ներկայացնելու իրավասությունը, կամ իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու իրավասությունը, կամ իրավաբանական անձի կազմում հսկողություն իրականացնելու իրավասությունը, ինչպես նաև կատարվել են վերը նշված հանցանքներում այդպիսի ֆիզիկական անձին՝ իբրեւ հանցակից կամ սադրիչ ներգրավելու նպատակով (հոդված 10, կետ 1),

- կոնվենցիայի հոդված 10, կետ 1-ում նշված դեպքերի հետ մեկտեղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, ապահովելու համար, որ իրավաբանական անձը պատասխանատվություն կրի այն դեպքերում, երբ կոնվենցիայի հոդված 10, կետ 1-ում սահմանված հսկողության կամ վերահսկողության բացակայությունը հնարավոր է դարձրել վերոհիշյալ կետով սահմանված քրեական հանցանքների կատարումն ի շահ տվյալ իրավաբանական անձի, վերջինիս իրավասության տակ գտնվող ֆիզիկական անձի կողմից (հոդված 10, կետ 2),

- ապահովել, որպեսզի կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պատասխանատվությունը կրող իրավաբանական անձինք ենթարկվեն արդյունավետ, համարժեք եւ տարհամոզիչ քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցները (հոդված 10, կետ 4),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան պատժամիջոց սահմանելիս հաշվի առնել կոնվենցիայի այլ Կողմի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կոնվենցիայով սահմանված հանցանքների համար կայացրած դատավճիռները (հոդված 11),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել կոնվենցիայով սահմանված Ֆինանսական հետախուզության մարմին (այսուհետ՝ ՖՀՄ: ստեղծելու համար (հոդված 12, կետ 1),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի ՖՀՄ-ն հնարավորություն ունենա ուղղակի կամ անուղղակի ձեռվ, պատշաճ ժամանակին ձեռք բերելու այն ֆինանսական, վարչական եւ իրավական տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է իրեն իր գործառույթները, մասնավորապես, կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունն իրականացնելու համար (հոդված 12, կետ 2),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել փողերի լվացման կանխարգելմանն ուղղված՝ կարգավորման, վերահսկման կամ մոնիթորինգի համընդիանուր ներքին համակարգ հաստատելու համար, ինչպես նաև հաշվի առնել կիրառվող միջազգային չափանիշները՝ ներառելով, մասնավորապես, փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների հատուկ հանձնախմբի (FATF) ընդունած առաջարկները (հոդված 13, կետ 1),

- ձեռնարկել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք թույլ կտան ՖՀՄ-ին կամ, համապատասխան դեպքերում, որեւիցե այլ լիազորված իշխանության կամ մարմնի, երբ կասկած է առաջանում փողերի լվացման հետ տվյալ գործարքի առնչության վերաբերյալ, ձեռք առնել շտապ գործողություններ, որպեսզի գործարքը ժամանակավորապես դադարեցվի կամ կասեցվի՝ այն վերլուծելու եւ կասկածը հաստատելու նպատակով (հոդված 14),

- ելնելով գործիքների եւ եկամուտների բոնագրավմանն ուղղված հետաքննության եւ դատական վարույթների նպատակներից՝ հնարավորության դեպքում առավելագույն չափով համագործակցել կոնվենցիայի մյուս Կողմերի հետ (հոդված 15, կետ 1),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան կոնվենցիայի IV բաժնով նախատեսված պայմանների

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Անքորդ կատարել հետեւյալ հարցումները՝ եկամուտներ կամ գործիք հանդիսացող գույքի որոշակի միավորների բռնագրավման վերաբերյալ, ինչպես նաև եկամուտների այնպիսի բռնագրավման վերաբերյալ, որը բաղկացած է եկամուտների արժեքին համապատասխան գումար վճարելու պահանջից, եւ հետաքրննության ընթացքում աջակցության եւ նախնական միջոցների վերաբերյալ՝ վերը նշված բռնագրավման տեսակներից որեւէ մեկը հետագայում իրականացնելու նպատակով (հոդված 15, կետ 2),

- ընդունել այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որպեսզի եկամուտներ եւ գործիքներ հայտնաբերելու, որոնելու, սառեցնելու կամ առգրավելու նպատակով կոնվենցիայի այլ Կողմերի ներկայացրած հարցումներին տրվի այնքան առաջնայնություն, որքան տրվում է ներքին ընթացակարգերի շրջանակներում կատարվող հարցումներին (հոդված 15, կետ 4):

3. Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետի, 17-րդ հոդվածի 5-րդ կետի, 24-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն նախատեսում է կատարել հայտարարություններ, համաձայն որոնց՝ Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետը եւ 17-րդ հոդվածը կիրառելու է միայն կոնվենցիային կից հավելվածում նշված հանցագործությունների նկատմամբ, իսկ կոնվենցիայի 24-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելու է միայն ՀՀ սահմանադրական սկզբունքների եւ իրավական համակարգի հիմնական հասկացությունների համաձայն: Հայտարարություններով նախատեսվում է նաև, որ կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ՀՀ ներկայացվող հարցումները եւ այդպիսի հարցումներին առնչվող փաստաթղթերը պետք է ուղեկցվեն անգլերենով կատարված թարգմանությամբ, իսկ, կոնվենցիայի 42-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, կոնվենցիայի 7-րդ բաժնի համաձայն ՀՀ կողմից տրամադրված տեղեկությունները կամ ապացույցները չեն կարող առանց ՀՀ-ի նախնական համաձայնության հայցող կողմի իրավասում մարմինների կողմից օգտագործվել կամ փոխանցվել այլ քննության կամ վարույթի համար, բացի հարցման մեջ նշվածից:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը  
**Ո Ր Ո Շ Ե Յ .**

1. 2005 թվականի մայիսի 16-ին Վարշավայում ստորագրված՝ «Հանգավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առզրավման ու բռնագրավման եւ ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում (կից հայտարարություններով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**22 Խունվարի 2008 թվականի  
ՍՊ-730**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՎԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ

Մ(19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ, ՀՕ-519-Ն) 47 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ

ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

29 հունվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,  
մասնակցությամբ՝

դիմող՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

իրավիրված՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Վ. Խաչիկյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (19 նոյեմբերի 2002 թվականի, ՀՕ-519-Ն) 47 հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 02.10.2007թ. մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող կողմի եւ պատասխանող կողմի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով «Պետական կենսաբոշակների մասին» ՀՀ օրենքը, սահմանադրական դատարանում ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչների վերլուծությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Պետական կենսաբոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին եւ ուժի մեջ մտել 2003 թվականի ապրիլի 10-ից:

Օրենքի 47 հոդվածը՝ հաշվի առնելով 2007թ. նոյեմբերի 19-ի ՀՕ-247-Ն օրենքով կատարված փոփոխությունը, սահմանում է. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը եւ անհատական հաշվառման բազայի ձեւավորումն ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է, իսկ 1992 թվականի հունվարից սկսած՝ նաեւ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի»:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին եւ երկրորդ մասերի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»:

Դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652 (կետ 6), 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665 (կետ 5), 2007թ. հունվարի 16-ի ՍԴՈ-673 (կետեր 8-9), 2007թ. նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշումներում:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՒԽ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Դիմող կողմը գտնում է, որ իր կողմից վիճարկվող դրույթը, համաձայն որի՝

«Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի», հակասում է ՀՀ Սահմանադրությանը՝ հետևյալ պատճառով:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Սոցիալական իրավունքների շարքում առանձնակիրքն կարեւորվում է քաղաքացիների կենսաքողակային իրավունքը, որն իր կարգավորումն է ստանում «Պետական կենսաքողակների մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքով սահմանվում են կենսաքողակի նշանակման համար կիրառվող գործակիցները, որտեղ կարեւոր նշանակություն է տրվում ապահովագրական ստաժին: Հետեւաբար, «Պետական կենսաքողակների մասին» ՀՀ օրենքով սահմանվող՝ ստաժի հաստատմանը վերաբերող ժամկետի սահմանափակումը եւ պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում դրա հաստատման արգելքը խախտում է ՀՀ Սահմանադրությանը ամրագրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից յուրաքանչյուրի օգտվելու սահմանադրական իրավունքը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի հարցադրումները հիմնավոր են եւ «Պետական կենսաքողակների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ Սահմանադրության առանձին դրույթների անհամապատասխանության խնդրի առկայությունն ակնհայտ է հետեւյալ պատճառաբանությամբ: Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները եւ պարտականությունները..., ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ իրապարակային դատաքննության իրավունք»: Նույն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոն գործող անձինք»: Իսկ ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմիննե-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թի առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: Փաստորեն, օրենքով սահմանափակվել է քաղաքացիների՝ կենսարժակային իրավունքների պաշտպանության նպատակով դատական պաշտպանության դիմելու իրավունքը:

4. Օրենքը՝ որպես պետական կենսարժակային ապահովության եւ պետական կենսարժակային ապահովագրության կազմակերպման եւ իրականացման սկզբունք, ի թիվս այլոց, ամրագրում է պետական կենսարժակային սոցիալական ապահովագրության պարտադիրության սկզբունքը եւ անհատական (անձնափորված) ապահովագրական հաշիվներում արտացոլվող՝ կենսարժակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տեղեկատվության հիման վրա կենսարժակների նշանակման եւ վճարման ապահովման սկզբունքը: Այս սկզբունքներին համապատասխան՝ օրենքը, կենսարժակի չափը պայմանավորելով կատարված ապահովագրական վճարումներով եւ ապահովագրական ստաժի տեսողությամբ (հորված 40), ապահովագրական կենսարժակի (տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի) իրավունք է վերապահում միայն այն անձանց, ովքեր կատարել են պարտադիր կենսարժակային սոցիալական ապահովագրության վճարումներ: Մասնավորապես, ապահովագրական տարիքային կենսարժակի իրավունքը վերապահվում է 63 տարին լրացած անձանց՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում:

Ըստ օրենքի տրամաբանության՝ կատարված ապահովագրական վճարումներով եւ ապահովագրական ստաժի տեսողությամբ է պայմանավորվում կենսարժակի չափը: Այս եզրահանգումն ուղղակիորեն բխում է օրենքի 40 հոդվածից եւ անուղղակիորեն՝ օրենքով ամրագրված առանձին սկզբունքներից եւ դրույթներից (մասնավորապես՝ օրենքի 2, 9 հոդվածներ):

Այն դեպքում, եթե անձը զրկված է փաստացի ապահովագրական ստաժը հաստատելու հնարավորությունից, այս տրամաբանությունը խախտվում է, քանզի հնարավոր է, որ անձը փաստացիորեն կատարել է ապահովագրական վճարումներ, սակայն համապատասխան փաստաքրեր չունենալու պատճառով զրկվում է այդ վճարումների կատարմամբ պայմանավորված չափով կենսարժակ ստանալու հնարավորությունից:

5. Օրենքի հիման վրա ձեւավորվում է կենսարժակային ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնափորված) հաշվառման տվյալների միասնական բազա: Կենսարժակային սոցիալական ապահովագրության բազայի տվյալներն օգտագործվում են կենսարժակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու), վճարելու համար: Օրենքի ուժի մեջ մտնելուց եւ նշանակման հաշվառման բազայի ձեւավորումից

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հետո ապահովագրված անձի ձեռք բերած ապահովագրական ստաժը հաշվարկվում է անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների հիման վրա: Իսկ մինչ այդ ապահովագրված անձի ունեցած աշխատանքային ստաժը հաշվառման է ապահովագրական ստաժում համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Համաձայն օրենքի 47 հոդվածի՝ այդ փաստաթղթերն են՝ աշխատանքային գրքույկը, իսկ 1992թ. հունվարից սկսած՝ նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը: «Պետական կենսաքոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշումը սահմանում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք հաստատում են ապահովագրական ստաժը՝ աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում:

Ինչպես օրենքի վիճարկվող, այնպես էլ մյուս դրույթների վերլուծությունը վկայում է, որ ապահովագրական ստաժի հաստատման խնդիր կարող է առաջանալ միայն մինչեւ վիճարկվող օրենքի դրույթի հիման վրա կենսաքոշակային ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների միասնական բազայի ստեղծումը ձեռք բերված ապահովագրական ստաժի կապակցությամբ:

6. Համաձայն օրենքի 12 հոդվածի՝ տարիքային կենսաքոշակի իրավունք ձեռք բերելու նախապայման է հանդիսանում 25 տարվա ապահովագրական ստաժի (պահանջվող ստաժ) առկայությունը: Օրենքի 16 հոդվածի համաձայն՝ կենսաքոշակի չափը հաշվարկվում է կենսաքոշակի հիմնական եւ ապահովագրական մասերի գումարից: Կենսաքոշակի ապահովագրական մասը հաշվարկվում է մինչեւ անձնավորված հաշվառման ներդրումը ձեռք բերված ապահովագրական ստաժի եւ անձնավորված հաշվառման ներդրումից հետո անհատական ապահովագրական հաշիվներում արտացոլվող՝ կենսաքոշակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տեղեկատվության հիման վրա: Օրենքի 16 հոդվածում տրվում է կենսաքոշակը հաշվարկելու բանաձեւը:

Նշված բանաձեւի վերլուծությունը վկայում է, որ կենսաքոշակի չափը որոշելիս էական նշանակություն ունի ոչ միայն պահանջվող ապահովագրական ստաժը, այլև՝ փաստացի ապահովագրական ստաժը:

7. Գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքների ծագումը, փոփոխությունը կամ դադարումը կապված է որոշակի հանգամանքների հետ, որոնց օրենքը տալիս է իրավական նշանակություն (իրավաբանական փաստեր): Ապահովագրական ստաժը հանդիսանում է այն իրավաբանական փաստը, որի հիման վրա ծագում է ապահովագրական կենսաքոշակի իրավունքը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

գլուխը նվիրված է իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ գործերի քննության կարգին: Նշված օրենսգրքի 189 հոդվածը սահմանում է այն իրավաբանական փաստերի ոչ սպառիչ ցանկը, որոնք ենթակա են դատարանի կողմից հաստատման: Այդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ դատարանը, օրենքով նախատեսված դեպքերում, քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր: Ըստ քննության առարկա հանդիսացող նորմերի՝ օրենսդիրն աշխատանքային ստաժը հաստատելու իրավասությունը վերապահել է դատարանին, սակայն, միաժամանակ, վիճարկվող դրույթով այդ իրավասության իրականացումը ենթարկել է ձեռական հիմքով սահմանափակումների՝ անձին զրկելով իր իրավունքի ծագման համար անհրաժեշտ իրավաբանական փաստը հաստատելու նպատակով դատարան դիմելու և դատարանին՝ իրեն օրենքով վերապահված իրավասությունն արդյունավետորեն եւ լիարժեքորեն իրականացնելու հնարավորությունից:

8. Օրենսդրությամբ բույլատրված է իրավաբանական փաստերը հաստատել ոչ միայն դատական կարգով, այլ նաև՝ վարչական, նոտարական կարգով եւ այլ մարմինների կողմից:

Վիճարկվող օրենքի 48 հոդվածը եւս նախատեսում է ապահովագրական ստաժի հաստատման վարչական կարգ: Այդ հոդվածի 5-րդ կետը, մասնավորապես, սահմանում է, որ պատերազմների, ռազմական գործողությունների, տարերային աղետների, վրաբների, արհավիրքների եւ այլ արտակարգ իրավիճակների հետեւանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստեղծում է ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողովներ, որոնց կազմի մեջ մտնում են գործադիր իշխանությունների, գործառուների, արհմիությունների կամ աշխատողների կողմից լիազորված այլ ներկայացուցիչներ: Նման հանձնաժողով ստեղծվել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի թիվ 820-Ն՝ «1988 թվականի երկրաշարժի հետեւանքով Սպիտակի նախկին վարչական շրջանի տարածքի քաղաքացիների ապահովագրական ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության պատճառով ապահովագրական ստաժ սահմանող հանձնաժողով ստեղծելու եւ հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» որոշմամբ:

Օրենքի 48 հոդվածի 5-րդ կետի գործողության շրջանակը, սակայն, որոշակիորեն սահմանափակ է, այն է՝ այս դրույթն առնչվում է միայն այն դեպքերին, երբ փաստաթղթերը չեն պահպանվել այդ հոդվածում նշված արտակարգ (ֆորսմաժորային) հանգամանքների պատճառով:

Սակայն, նոյնիսկ ապահովագրական ստաժի վերոհիշյալ վարչական կարգով հաստատման հնարավորության առկայությունը չպետք է ան-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ճանց զրկի իրավաբանական փաստերի հաստատման խնդրով դատարան դիմելու իրավունքից, քանզի ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության չահմանափակվող հնարավորություն:

Միենույն ժամանակ, հարկ է նկատել, որ, ի տարբերություն ապահովագրական ստաժի՝ դատական կարգով հաստատման, ապահովագրական ստաժի՝ վարչական կարգով հաստատման դեպքում «Պետական կենսաքոչակների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ապահովագրական ստաժի որևէ ժամկետային սահմանափակում, ինչը ոչ միայն չի ապահովում միենույն հասարակական հարաբերության կարգավորման միասնականությունը, այլև անձի շահերի տեսանկյունից անհմաստ է դարձնում արտակարգ իրավիճակների հետեւանքով ապահովագրական ստաժը հաստատող փաստաքրերի կորստի դեպքում դատական պաշտպանության իրավունքից օգտվելը:

9. «Պետական կենսաքոչակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենքի այլ հոդվածների ուսումնափրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներն առնչվում են ոչ միայն Սահմանադրության 18 հոդվածին, այլ նաև Սահմանադրության այլ հոդվածների պահանջներին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 37 հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր որ ունի ձերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գրծագրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձեւերը սահմանվում են օրենքով»:

Այս հոդվածի բովանդակությունից բխում է, որ ՀՀ Ազգային ժողովին է պատկանում կենսաքոչակների ծավալները եւ ձեւերը, դրանց նշանակման պայմանները եւ կարգը սահմանելու լիազորությունը: Կենսաքոչակի նշանակման պայմանները բավարարելու դեպքում անձը ձեռք է բերում կենսաքոչակի իրավունք, իսկ պետության վրա դրվում է այդ իրավունքի իրականացումն ապահովելու պարտականություն: Անձին զրկելով իր ունեցած փաստացի ապահովագրական ստաժը հաստատելու հնարավորությունից, օրենսդիրն ուղղակիորեն սահմանափակում է անձի սոցիալական ապահովության իրավունքի մաս կազմող կենսաքոչակի իրավունքը: Այդ սահմանափակումը, մասնավորապես, կարող է դրսեւրվել նրանում, որ հնարավորություն չունենալով ապացուցել պահանջվող ստաժը (25 տարի) գերազանցող ապահովագրական ստաժի առկայությունը՝ անձը զրկվում է ավելի շատ կենսաքոչակ ստանալու հնարավորությունից, քանզի ապահովագրական ստաժի՝ պահանջվող ստաժը գերազանցող տարիներն եական նշանակություն ունեն կենսաքոչակի չափը որոշելիս:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

10. ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:

Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պողիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները։ Պետության հայեցողությունն է սահմանել կենսաքոշակի ձեւերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները։ Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք։ Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձեւական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրույթուն է ստեղծվում փաստացիորեն միեւնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև։

Ելնելով գործի բննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Պետական կենսաքոշակների մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 37 հոդվածներին հակասող և անվավեր։

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 12-րդ մասի հիման վրա սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա։

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**29 հունվարի 2008 թվականի  
ՍՊԸ- 731**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

2007 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԲՈՒ ԴԱԲԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՎԻ  
ՄԻՋԵՎ ԱՐՓԱ-ՄԵՎԱՆ ԹՈՒՆԵԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՍՎԱՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

1 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի (գեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի դեկտեմբերի 12-ին Աբու Դարիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Աբու Դարիի զարգացման հիմնադրամի միջեւ Արփա-Մեւան թունելի վերականգնման նախագծի ֆինանսավորման մասին վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորու-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Սույն համաձայնագիրն ստորագրվել է 2007թ. դեկտեմբերի 12-ին Արու Դարիում՝ Արփա-Սեւան քունելի վերականգնման նախագծի ֆինանսավորման նպատակով:

2. Նախագծի նպատակն է նպաստել Սեւանա լճի մակարդակի բարձրացմանը եւ բնապահպանական կայունության պահպանմանը:

3. Ըստ համաձայնագրի՝ Արու Դարիի օրգացման հիմնադրամը, համաձայնագրում ամրագրված պայմաններով, Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է երեսունվեց միլիոն յոթ հարյուր երեսուն հազար (36.730.000) ԱՄԷ դիրիեմի չափով վարկ:

4. Համաձայնագիրը սահմանում է այն նախագիծը, որի իրականացմանն ուղղվում է վարկավորումը, վարկավորման չափը, վճարման կարգն ու ժամանակացույցը, կատարվելիք աշխատանքների նկարագրությունը, վերահսկողության իրականացման կարգը, ֆինանսավորման ընթացակարգը, վեճերի լուծման կարգը, ինչպես նաև համաձայնագրի գործողության եւ գործողության դադարման կարգն ու ժամկետները: Համաձայնագրի մասն են կազմում նաև երկու հավելվածները՝ Հավելված 1. «Պարտքի մարման ժամանակացույց» եւ Հավելված 2. «Նախագծի նկարագրություն»:

5. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վճարել տարեկան երեք տոկոս (3%) տոկոսադրույթ վարկի հիմնական գումարից օգտագործված եւ ժամանակին չմարված պարտքի համար,

- վարկի միջոցներն ուղղել բացառապես նախագծի իրականացման համար պահանջվող ապրանքների իրական արժեքի եւ ծառայությունների ֆինանսավորմանը,

- ապահովել, որպեսզի վարկի հիմնական գումարը, տոկոսները եւ այլ վճարները վճարվեն առանց որեւէ պահումների եւ ազատված լինեն ՀՀ օրենսդրությամբ գործող հարկերից,

- վարկի հիմնական գումարը, տոկոսավճարները եւ այլ վճարները վճարել անկախ ՀՀ-ում գործող որեւէ սահմանափակումից,

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ձեռնարկել անհրաժեշտ քայլեր նախագծի իրականացման համար եւ չձեռնարկել կամ չբույլատրել ձեռնարկել որեւէ քայլ, որը կկանխի կամ կխոչընդունի նախագծի իրականացմանը կամ շահագործմանը կամ համաձայնագրի որեւէ դրույթի կատարմանը,

- Հիմնադրամի բոլոր փաստաթղթերը, արձանագրությունները, նամակագրությունը եւ նմանօրինակ բոլոր նյութերը համարել կոնֆիդենցիալ եւ երաշխավորել Հիմնադրամի բացարձակ անձեռնմխելիությունը գրաքննությունից եւ հրապարակումների ստուգումներից,

- Հիմնադրամի բոլոր ակտիվները եւ եկամուտն ազատել ազգայնացումից, առգրավումից եւ բռնագրավումից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2007 թվականի դեկտեմբերի 12-ին Արու Դարիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արու Դարիի գարգացման հիմնադրամի միջեւ Արփա-Սեւան քունելի վերականգնման նախագծի ֆինանսավորման մասին վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 Փետրվարի 2008 թվականի  
ՍՊ-732



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇԽԱՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՆ ՎՐԱ՝  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ  
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ  
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
115 ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

5 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող քաղ. Ա. Հարությունյանի ներկայացուցիչ Հ. Ալումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դոնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացի Աշոտ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օրենքի 5 հոդվածի եւ 2004 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունված՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Հարությունյանի՝ սահմանադրական դատարանում 03.07.2007թ. նուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմների գրավոր բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենքները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեակատարողական օրենսգրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 18-ին, ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 10-ին: Օրենսգրքի վիճարկվող 115 հոդվածը փոփոխվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով, որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2006թ. հունիսի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2006թ. հուլիսի 21-ին: Նշված օրենքով օրենսգրքի 115 հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ: Այն փոփոխվել է նաև «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-268-Ն օրենքով, որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007թ. դեկտեմբերի 8-ին եւ ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 2007թ. դեկտեմբերի 19-ին:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի հիման վրա օրենսգրքի վեճի առարկա 115 հոդվածը վերնագրված է. «ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՍԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ԿԱՍ ՊԱՏԺԻ ՉԿՐԱԾ ՍԱՄՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺԱ-ՏԵՍԱԿՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»: Հոդվածը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ.

«1. Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագրծություն կատարելու համար որոշակի

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դատարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում:

2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարան ներկայացվող միջնորդագրի հետ ներկայացվում է նաև դատապարտյալի անձնական գործը:

3. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշումը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի՝ հավանություն չտալու մասին որոշումն ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննարկում է հավանություն չստանալու որոշումը կայացվելուց երեք ամիս անց, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը դատարանի կողմից մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդություն կրկին կարող է ներկայացվել դատարան մերժման որոշումը կայացվելուց վեց ամիս անց, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

4. Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումները օրենսդրությանը հակասելու դեպքում կարող են բողոքարկվել դատական կարգով: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. նոյեմբերի 13-ին նույնականացված է անհաջողություն ունեցող 114 և 115 հոդվածներում եւ օրենսգիրքը լրացվել է նոր՝ 1151 հոդվածով։ Համաձայն այդ փոփոխությունների՝ օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասում «Դատապարտյալին» բառը փոխարինվել է «Որոշակի ժամկետով կամ ցման ազատազրկման դատապարտված անձին» բառերով։ Այդ մասը լրացվել է նաև հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով։ «Կարգապահ-կան գումարտակի հրամանատարության կողմից կարգապահական գումարտակում պատիժ կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը ներկայացվում է սույն օրենսգրքի 1151-րդ հոդվածին համապատասխան»։

Օրենսգրքի 115 հոդվածի վերնագիրը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ։ «Որոշակի ժամկետով կամ ցման ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատիժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման կարգը»։ Նույն հոդվածի 4-րդ մասից հանվել է «օրենսդրությանը հակասելու դեպքում» բառերը։

Օրենսգրքի 1151 հոդվածը վերնագրված է «Կարգապահական գումարտակում պահելու դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման կարգը»։ Այն նախատեսում է։

1. Պատիժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում կարգապահական գումարտակի հրամանատարը մեկամսյա ժամկետում պարտադիր միջնորդագիր է ներկայացնում դատարան՝ կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ։

2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագիր հետ դատարան է ներկայացվում նաև դատապարտյալի անձնական գործը։

3. Դատարանի կողմից միջնորդությունը մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել դատարան՝ մերժման որոշումը կայացվելուց հետո ոչ շուտ, քան վեց ամիս անց։

4. Կարգապահական գումարտակի հրամանատարի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը չկատարելը կարող է բողոքարկվել դատական կարգով»։

## «ՀԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-67-Ն օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի հունիսի 13-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 16-ին, ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 21-ին: Օրենքի 5 հոդվածով փոփոխության է ենթարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածը, որի 1-ին մասից հանվել է հետևյալ բովանդակությամբ երրորդ նախադասությունը. «Պատժից պայմանական վաղակետ ազատելու եւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին միջնորդագիր դատարան կարող են ներկայացնել նաեւ դատապարտյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՀՕ-91-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 20-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 8-ին, նույնպես կատարվել է (հոդվ. 107) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածի ճիշտ նույնարովանդակ փոփոխություն: Պատասխանող կողմից բացասարությամբ դա ընդունվել է «...ժամանակային փոքր տարրերությամբ» եւ «...ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկման առարկա հանդիսացող դրույթի առումով իրավական հետեւանք չի առաջացնում»: Սահմանադրական դատարանը, երեւույթն արտառոց զնահատելով հանդերձ, գտնում է, որ նման իրավիճակում սահմանադրականության հարցով դատարանի կողմից ընդունվող որոշումը հավասարապես պետք է վերաբերի օրենքի հիշյալ երկու փոփոխություններին:

2. Դիմող կողմը վիճարկում է նշված ՀՀ ՀՕ-67-Ն օրենքի 5 եւ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 4-րդ մասին՝ համակցված 43 եւ 44 հոդվածների հետ, այն հիմքով, որ վիճարկվող հոդվածների դրույթներով դատապարտյաները գրկել են վաղաժամկետ ազատելու միջնորդագրով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից:

Դիմող կողմն օրենսգրքի 115 հոդվածի սահմանադրականությունը վիճարկում է նաեւ այն հիմքով, որ այն ոչ միայն դատապարտյալին գրկում է

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից՝ ստեղծելով երկակի միջնորդավորված կարգ, այլ նաեւ այն հիմքով, որ թույլ չի տալիս բողոքարկել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները:

Դիմող կողմը գտնում է, որ ոչ միայն խախտվել է Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված իր իրավունքը, այլև հաշվի չեն առնվել նաեւ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2003)22 հանձնարարականի պահանջները՝ պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը հնարավորություն չի տալիս դատապարտյալին անմիջականորեն դիմել դատարան, իսկ նույն հոդվածի 4-րդ մասն անձին գրկում է իր իրավունքների ու ազատությունների «...ենթադրյալ խախտումը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից»: Ըստ դիմողի՝ վիճարկվող օրենքները հակասում են Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 4-րդ մասին, որոնք պետության վրա պողիտիվ պարտավորություն են դնում ապահովելու դատապարտյալի՝ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը, ինչպես նաեւ այդ իրավունքի խախտման դեպքում՝ արդյունավետ պաշտպանության միջոցներ տրամադրելու իրավունքը: Դա ենթադրում է, որ պետք է լինի մարմին, որն իրավասու է քննարկել պատիժը մեղմացնելու հարցը, իսկ այն դեպքում, եթե հարցը քննարկելու ժամանակ խախտվել են անձի իրավունքները եւ (կամ) ազատությունները, ապա՝ մարմին, որն իրավասու է վերականգնել խախտված իրավունքները: Ըստ դիմողի՝ այդ մարմինները դատարաններն են, սակայն վեճի առարկա օրենքները դատարաններին գրկել են այդ լիազորություններից:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ ՀՀ Սահմանադրության հիշատակվող նորմերի պահանջները հստակ ապահովվում են ՀՀ օրենսդրությամբ: Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասով երաշխավորված իրավունքը «...պետության կողմից ստեղծված իրավասու մարմիններին դիմելու յուրաքանչյուր դատապարտյալին ընձեռված հնարավորություն է», իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածը նախատեսում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշում ընդունող մարմինը դատարանն է: Միաժամանակ, ՀՀ քրեական, քրեական դատավարության եւ քրեակատարողական օրենսգրքերը սահմանում են այդ հարաբերությունների բոլոր մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ պատասխանողի՝ մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ գլուխը նվիրված է պատ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ժից ազատելու ինստիտուտին եւ հստակ սահմանված են ինչպես պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, այնպես էլ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարիմելու հիմքերը:

Դատասխանող կողմի կարծիքով, ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով յուրաքանչյուր դատապարտյալի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված խնդրանքի իրավունքը, ուղղակիորեն չի նշում, թե ում է ուղղված խնդրանքը, առավել եւս չի նշում, որ խնդրանքն ուղղակիորեն դատապարտյալի կողմից պետք է ներկայացվի խնդրանքի լուծման իրավագործություն ունեցող մարմնին՝ նշված հարցի լուծումը թողնելով օրենսդրի կարգավորմանը:

Դատասխանողը գտնում է, որ «...եթե խախտվել է դատապարտյալի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված խնդրանքի (եւ ոչ թե խնդրանքի բավարարման) իրավունքը (օրինակ, իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով չի ընդունել կամ քննել խնդրանքը կամ պատժի ժամկետի օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում չի լսել կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու եւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարիմելու ներկայացման հարցը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006թ.-ի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի 7-րդ կետով սահմանված կարգով ենթահանձնաժողովը ոչ ուշ, քան մինչեւ յուրաքանչյուր ամսվա 15-րդ օրը չի այցելել պատիժ կատարող հիմնարկ, չի ծանոթացել դատապարտյալի անձնական գործին կամ մեկուսի չի հանդիպել նրա հետ), վերջինս միանշանակորեն կարող է օգտվել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից»:

4. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է յուրաքանչյուր դատապարտյալի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը: Համաձայն այդ հոդվածի՝ ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը վերապահված է յուրաքանչյուր դատապարտյալի: Սահմանադրության 43 հոդվածը 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: ՀՀ Սահմանադրության 44 հոդվածին համապատասխան՝ այդ իրավունքը չի կարող նույնիսկ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ուղղական կամ արտակարգ դրության ժամանակ:

Ներման ինստիտուտն իրենից ներկայացնում է հանցագործություն կա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տարած անձի նկատմամբ՝ մարդու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, արդարության սահմանադրական սկզբունքների անմիջական գործողության դրսեւորում։ Ըստ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 17-րդ կետի՝ ներում շնորհելը ՀՀ Նախագահի բացառիկ իրավասությունն է։

Ներման դրսեւորման ճեւերը բացահայտված են ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում։ Վերջինիս համաձայն՝ «հանցագործության համար դատապարտված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»։ Հոդվածի բովանդակությունը վկայում է, որ օրենքը տարբերակում է ներման երկու տարատեսակ՝ լրիվ ներում (պատժից լրիվ ազատում, ներառյալ՝ հետեւանքները) եւ մասնակի ներում (պատժից մասնակի ազատում կամ պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժով)։ Ներում շնորհելու գործընթացը կարգավորվում է ՀՀ Նախագահի 2003թ. նոյեմբերի 19-ի «Ներման խնդրագրերի կարգը հաստատելու մասին» հրամանագրով։

Ներման ինստիտուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ ներում հայցելու իրավունքի իրացման համար որեւէ նախապայման սահմանված չէ, ներում կարող է հայցել յուրաքանչյուր դատապարտյալ, ներումը կարող է շնորհվել յուրաքանչյուր դատապարտյալի՝ անկախ կատարված հանցագործության բնույթից, ծանրությունից ու այլ հանգամանքներից (մասնավորապես, պատժաչափից, պատժի կրած մասից)։ Ներում շնորհելու համար որեւէ պարտադիր չափանիշ նախատեսված չէ, այն ամբողջությամբ բողնված է ՀՀ Նախագահի հայեցողությանը։ Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանափակված չէ ո՛չ դատապարտյալների շրջանակով, ո՛չ հանցագործությունների բնույթով, ո՛չ պատժաչափերով։

Ներման ինստիտուտի օրենսդրական կարգավորումը վկայում է այն մասին, որ ներման խնդրանքի իրավունքի իրացման համար որեւէ սահմանափակում նախատեսված չէ, հետեւարար, ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի դրույթին համահունչ, ներում հայցելու իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ, եւ ՀՀ Նախագահը ներում կարող է շնորհել յուրաքանչյուր դատապարտյալի։

5. Մարդասիրության սկզբունքի դրսեւորման ճեւերից է նաև դատապարտյալին պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտը։ Այդ ինստիտուտի էությունը կայանում է նրանում, որ հանցագործության համար դատապարտված անձը, քրեական օրենքով նախատեսված հիմքե-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

րով, կարող է դատարանի կողմից փաստացիորեն ազատվել պատժի հետագա կրումից: Պատժից ազատելու համար նյութական հիմք է հանդիսանում պատիժը կրելու աննպատակահարմարությունը կամ անհնարինությունը, հաշվի առնելով տվյալ դատապարտյալի՝ հանրության վտանգավոր լինելու հանգամանքի վերացումը, դատապարտյալի առողջական վիճակի վատքարացման փաստը կամ քրեական իրավունքի փոփոխությունը: Պատժից ազատելու ինստիտուտի նշանակությունը կայանում է նրանում, որ բույլ տալով անտեսել քրեական հարկադրանքի միջոցները, խրանում է դատապարտյալի վերադասիարակումը, նպաստում է նրա ընտելացմանն իրավակարգի պահանջներին, սոցիալական վարքագծի կանոններին, ինչպես նաև բացառում է պատժի կիրառումն այն դեպքերում, եթե պատժի կիրառման նպատակներին հասնելը դառնում է ոչ իրական:

Այս ինստիտուտի դրսեւորման՝ ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված ձեւերն են՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը (ՀՀ ՔՕ 76 հոդված), պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը (ՀՀ ՔՕ 77 հոդված), հղի կանանց կամ մինչեւ երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը (ՀՀ ՔՕ 78 հոդված), պատժից ազատելը ծանր հիվանդության հետեւանքով (ՀՀ ՔՕ 79 հոդված), պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետեւանքով (ՀՀ ՔՕ 80 հոդված), ինչպես նաև պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով (ՀՀ ՔՕ 81 հոդված): Նշված ձեւերից յուրաքանչյուրի կիրառման դեպքում դատապարտյալը պետք է բավարարի քրեական օրենսդրությամբ սահմանված որոշակի պայմաններ ու հիմքեր, որով սահմանափակվում է այն անձանց շրջանակը, ում նկատմամբ դրանք կարող են կիրառվել: Այսպես. ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է միայն այնպիսի պատժատեսակների դեպքում, ինչպիսիք են ազատազրկումը և կարգապահական գումարտակում պահելը: Պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է, եթե դատապարտյալը փաստացի կրել է դատարանի կողմից սահմանված պատժի որոշակի մասը: Ելնելով հանցագործության ծանրությունից՝ պայմանական վաղաժամկետ ազատման համար ՀՀ քրեական օրենսգրքը նախատեսել է տարբեր ժամկետներ: Պատժից ազատելու այս ձեւը կիրառում է, եթե դատարանը գտնում է, որ դատապարտյալն ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանը հաշվի է առնում նաև դատապարտվածի կողմից տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը:

ՀՀ ՔՕ 77, 80 հոդվածներում նախատեսված՝ պատժից ազատելու ձեւե-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ըստ կիրառելի են միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկված դատապարտյալների նկատմամբ:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն պատժից ազատելու մնացած ձեւերի, պատժից ազատելու խնդրության մեջ կամ ազատվող դատապարտյալը գտնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարտականություններ, որոնք չկատարելու դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու եւ պատժի չկրած մասն ի կատար ածելու մասին:

Պատժից ազատելու պայմանական բնույթը պայմանավորում է մեկ այլ առանձնահատկություն եւս (այս առանձնահատկությունը վերաբերում է նաև ՔՕ 78 հոդվածով նախատեսված՝ պատժից ազատելու ձեւին), այն է՝ եթե պատժից ազատելու մյուս ձեւերի կիրառման արդյունքում վերացվում են կատարված հանցագործության բոլոր հետեւանքները, ապա պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալը մինչեւ դատարանի կողմից նշանակված պատժաժամկետի ավարտը շարունակում է համարվել դատվածություն ունեցող, ինչը հաշվի է առնվում փորձաշրջանում հանցագործություն կատարելու դեպքում պատիճ նշանակելիս (պատիճ նշանակվում է դատավճիռների համակցությամբ (ՔՕ հոդված 67)):

6. Ներման ինստիտուտի եւ պատժից ազատելու քրեախրավական ինստիտուտի, այդ թվում՝ նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի սահմանադրախրավական բովանդակության վերլուծությունը վկայում է, որ այդ երկու ինստիտուտների միջեւ իհմնական բովանդակային սկզբունքային տարբերությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն ներման ինստիտուտի, պատժից ազատելու ինստիտուտի դրսեւրման բոլոր ձեւերի, այդ թվում՝ նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կիրառման համար նախատեսված են որոշակի պայմաններ եւ հիմքեր, որոնք սահմանափակում են այդ ձեւերից օգտվելու հնարավորություն ունեցող դատապարտյալների շրջանակը, ինչի արդյունքում նման հնարավորությունը չի տարածվում յուրաքանչյուր դատապարտյալի վրա: Մինչդեռ ներում հայցելու իրավունքի իրացումը որեւէ նախապայմանով պայմանավորված չէ, ինչի արդյունքում որեւէ կերպ չի սահմանափակվում ներում հայցելու իրավունք ունեցող դատապարտյալների շրջանակը՝ անկախ պատիճը կրելու ժամկետից, եւ, հետեւարար, այդ իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դատապարտյալ:

Ելնելով վերոշարադրյալից, սահմանադրավան դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում կիրառված՝ «նշա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նակված պատիժը մեղմացնել» եզրույթի այնպիսի մեկնաբանությունը, որի դեպքում այդ եզրույթը ներառում է նաև պատժից ազատելու ինստիտուտը, անհամատեղելի է այդ դրույթի բովանդակության հետ եւ դրւու է այդ դրույթի տրամաբանության շրջանակներից: Պատժից ազատելու ինստիտուտի ողջ տրամաբանությունը հանգում է նրան, որ այն գործում է միայն որոշակի պայմանների եւ իիմքերի առկայության դեպքում, իետևաբար՝ նաև դատապարտյալների որոշակի շրջանակի համար: Ուստի պատժից ազատելու ինստիտուտի եւ դրա առանձին դրսեւորումների տրամաբանությունն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթի հետ, որտեղ «նշանակված պատիժը մեղմացնել» եզրույթն օգտագործված է եւ ենթակա է ընկալման մասնակի (պատիժը մեղմացնող) ներում իմաստով, ինչպես այն ներկայացված է ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում:

Ավելին, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում օրենքը նախատեսում է նաև այն վերացնելու հնարավորություն: Պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը ենթադրում է, որ այդ խնդրանքի բավարարումը պետք է լինի վերացման ոչ ենթակա: Ուստի պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտն այս առումով եւս անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ներման եւ պատժից ազատելու ինստիտուտների, դրանց բովանդակության, էության, սոցիալական նշանակության եւ նպատակների միջեւ առկա սկզբունքային եւ անհամատեղելի առանձնահատկություններն ու տարբերությունները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է ոչ թե ներման եւ պատժից ազատելու տարաբնույթ երկու առանձին ինստիտուտներին, այլ ներման ինստիտուտի գործադրման երկու տարատեսակներին՝ ներման լրիվ եւ մասնակի ձեւերին:

Ինչպես հստակ նշում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. սեպտեմբերի 24-ին ընդունած թիվ (2003) 22 հանձնարարականում, պայմանական վաղաժամկետ ազատումը չի ներառում համաներումը կամ ներումը: Այն ենթադրում է դատապարտված բանտարկյալներին ժամկետից շուտ ազատելը՝ ազատվելուց հետո ընկած ժամանակահատվածի անհատականացված պայմանների ներք (հանձնարարականի հավելված, մաս առաջին, կետ 1-ին): Նոյն հանձնարարականում որպես ընդհանուր սկզբունքներ են դիտարկվում, որ պայմանական վաղաժամկետ ազատման նպատակն է օգնել բանտարկյալներին «անցում կատարել բանտի կյանքից դեպի համայնքի օրինապահ կյանք»՝ միաժամանակ ապահովելով հանրության անվտանգությունը: Ընդ որում, եթե ներման

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կամ համաներման դեպքում խոսքը վերաբերում է ներմանը կամ նշանակված պատիժը մեղմացնելուն, ապա այս դեպքում գործ ունենք «պայմանական ազատման» ինստիտուտի հետ: Վերջինս ենթադրում է, նախ օրենսդրությամբ նախատեսվող պայմանները ու համապատասխան վերահսկողություն, ապա, այդ պայմանները չպահպանելու դեպքում՝ համապատասխան իրավական հետեւանքներ:

7. ՀՀ գործող օրենսդրության, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 70 և 76 հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածի դրույթների վերլուծությունը վկայում է, որ

ա) պայմանական վաղաժամկետ ազատման եւ համապատասխան վերահսկողական պայմանների սահմանման իրավասությունը վերապահված է դատարանին՝ պատժի կիրառումն իրականացնող մարմնի միջնորդության դեպքում,

բ) այն իրականացվում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում եւ պայմանավորված չէ դատապարտյալների դիմումով կամ խնդրանքով, այլ վերաբերում է բոլոր այն բանտարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիների դառնալու նվազագույն երաշխիքներին,

գ) օրենքը տարբերակված մոտեցում է ցուցաբերում տարբեր հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ,

դ) նախատեսվում են ներգործուն միջոցներ՝ վաղաժամկետ ազատման պայմանները խախտելու համար,

ե) վաղաժամկետ ազատման նպատակը բոլոր դատապարտյալների համար նախապես հայտնի խրախուսելի հնարավորություն է՝ հանրային ազատ կյանքին սահուն անցում կատարելու համար, առանց վտանգելու հասարակական կարգն ու այլոց իրավունքներն ու ազատությունները,

զ) Հայաստանի Հանրապետությունը վաղաժամկետ ազատելու հարցը որոշելու համար որդեգրել է, այսպես կոչված, հայեցողական ազատման համակարգը, որն առկա է նաեւ եվրոպական շատ երկրներում: Այդ համակարգի բնորոշ առանձնահատկություններից ելնելով է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434, 437, 438 հոդվածներով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114, 115 և 1151 հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշմամբ, ինչպես նաեւ ՀՀ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի թիվ ՆՀ-163-Ն հրամանագրով սահմանվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգերը:

8. Պայմանական վաղաժամկետ ազատելու մասին Եվրոպայի խորհրդական գործությունը պահպանում է պայմանական վաղաժամկետ ազատելու մասին ՀՀ օրենսգրքի 434 հոդվածությունը:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եթի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականը պարունակում է մի շարք սկզբունքային դրույթներ, որոնք էական նշանակություն ունեն իրավական պետությունում պայմանական վաղաժամկետ ազատման այս կամ այն մողելի լնտրության հարցում: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս բազմաթիվ այլ երկրների, որդեգրել է «հայեցողական ազատման» համակարգը, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ համաձայն վերոհիշյալ Հանձնարարականի՝ հայեցողական ազատման համակարգի դեպքում:

ա) նվազագույն ժամկետը, որը բանտարկյալները պետք է կրեն պայմանական վաղաժամկետ ազատվելուն ենթակա լինելու համար, պետք է սահմանված լինի օրենքով,

բ) պետք է ձգտել որոշումը կայացնել բանտարկյալի կողմից նվազագույն ժամկետը կրելուց հետո որքան հնարավոր է շուտ,

գ) պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները պետք է լինեն պարզորոշ եւ հստակ: Դրանք պետք է լինեն նաև իրական՝ այն իմաստով, որ պետք է հաշվի առնեն բանտարկյալների անձը, սոցիալական եւ տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրերի առկայությունը,

դ) պայմանական վաղաժամկետ ազատելուց հետո աշխատանքի հնարավորությունների բացակայությունը կամ մշտական ապրելավայր ունենալու բացակայության հանգամանքը չպետք է հիմք հանդիսանան այն մերժելու կամ հետաձգելու համար,

ե) պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ազատման թույլտվություն տրվի բոլոր այն բանտարկյալներին, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին: Միաժամանակ, իշխանությունները պարտավոր են ցույց տալ, որ բանտարկյալը չի համապատասխանում այդ չափանիշներին,

զ) եթե որոշում կայացնող մարմինը որոշում է մերժել պայմանական վաղաժամկետ ազատելը, այն պետք է սահմանի հարցը վերանայելու օր: Բոլոր դեպքերում, բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան կրկին դիմել որոշում կայացնող մարմնին՝ այն պահից, եթե իրենց իրավիճակն էականորեն փոխվել է հօգուտ իրենց:

ՀՀ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլիներ, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը եւ հայեցական լիազորությունների շրջանակը՝ ՀՀ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեր օրենսդրությամբ:

9. Դիմողի այն պնդումը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից գրկելը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի պահանջներին, իհմնավոր չէ: Նշված հարցով անմիջական դատարան դիմելու հնարավորությունը չի առնչվում դատական պաշտպանության իրավունքին: ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքը, երբ առկա է խախտված իրավունքների պաշտպանության խնդիր: Մինչդեռ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման քրեականական ինստիտուտի բովանդակությունը կազմում է պետության կողմից հումանիզմի դրսեւորում հանդիսացող՝ դատապարտյալին տրվող իրավական հնարավորություն, այլ ոչ թե դատապարտյալի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու իրավունք: Այդ մասին է վկայում այդ ինստիտուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորումը. մասնավորապես, դատապարտյալն ինքը կամ նրա ներկայացուցիչը պատժից վաղաժամկետ ազատելու ներկայացման գործընթացի նախաձեռնությանը մասնակցություն չի ունենում. ներկայացման հարցն օրենքի ուժով, համապատասխան ժամկետը լրանալուց հետո, առանց դատապարտյալի խնդրանքի կամ դիմումի (սակայն նրա համաձայնությամբ), պարտադիր կարգով քննության է առնում քրեականական իիմնարկի վարչական հանձնաժողովը: Հետեւարար, այս դեպքում չի կարող խոսքը վերաբերել խախտված իրավունքին, հետեւարար՝ նաեւ դրա դատական պաշտպանությանը: Նման հարց կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե խախտվել է պայմանական վաղաժամկետ ազատման՝ օրենքով սահմանված կարգը:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցով անմիջականորեն դատարան դիմելու հնարավորությունից գրկելը հակասում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին՝ խախտելով դատարանի մատչելիության իրավունքը, ապա հարկ է նշել, որ նշված հարցով դատարան դիմելու ոչ անմիջական հնարավորությունը չի առնչվում դատարանի մատչելիության իրավունքին: ՀՀ Սահմանադրության 19 հոդվածը երաշխավորում է

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատարանի մատչելիության իրավունքը, երբ առկա է կամ խախտված իրավունքները վերականգնելու, կամ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտություն: Մինչդեռ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու համար դիմելու դեպքում հարցը չի առնչվում ոչ խախտված իրավունքների վերականգնմանը, ոչ չել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ օրենքով նախատեսված կարգի խախտման, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման հարցում օրենքով սահմանված կարգով որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման առնչությամբ, որի բողոքարկման կարգը նույնապես սահմանվում է օրենքով:

10. Դիմող կողմը վիճարկում է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ:

Այս կապակցությամբ, հարկ է նախ անդրադառնալ հանձնաժողովների կարգավիճակին ու գործունեության բովանդակությանը:

Հանձնաժողովներն իրենց բնույթով անկախ են եւ ընդգրկում են ինչպես պետական կառույցների՝ համապատասխան գերատեսչությունների, այնպես էլ հասարակայնության ներկայացուցիչներ: Հանձնաժողովների նախագահների եւ անդամների լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ ստեղծվում են հանձնաժողովի առնվազն երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովներ, որոնց անդամները պետք է փոխադիր լիազորությունները կարգով, որպեսզի նույն անձը նույն քրեակատարողական հիմնարկի հետ կապված հարցերի նախապատրաստմանը մասնակցի ոչ ավելի, քան երեք ամիս անընդմեջ:

Անկախ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանող՝ ՀՀ Նախագահի հրամանագրը (31.07.2006թ. թիվ ՆՀ-163-Ն) կարող է բողոքարկման առարկա լինել՝ դրա թե՛ օրենքին եւ թե՛ Սահմանադրությանը համապատասխան լինելու տեսանկյունից: Այդ հանձնաժողովը որեւէ հարց չի կարող քննության առարկա դարձնել, եթե չկա պատիժը կատարող հիմնարկի վարչական հանձնաժողովի որոշումը (այն ստեղծվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ ՀՀ կառավարության որոշմամբ): Վարչական հանձնաժողովի որոշումները դատական կարգով կարող են բողոքարկվել՝ ըստ ՀՀ քրեակատարողա-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի: Փաստորեն, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված անկախ հանձնաժողովը (այդ նորմի սահմանադրականությունը դիմող կողմը չի վիճարկել) իրավանացնում է բացառապես վարչական հանձնաժողովի նկատմամբ վերահսկողական լիազորություն: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորվել է նաև իրավակիրառական պրակտիկայով, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման խնդրով, օրենքով նախատեսված պատժամիջոցների իրավական նշանակությունը շիմաստագրկելու անհրաժեշտությամբ, երբ պայմանական վաղաժամկետ ազատումը դառնում է ձեւական ու համատարած՝ առանց դրա իրավական նշանակության ու նպատակի հստակ երաշխավորման: Իսկ վերջինս անմիջականորեն առնչվում է նաև հասարակության անվտանգության եւ այլոց իրավունքների ու ազատությունների հարգման ու պաշտպանության խնդրին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2006թ. ընդունած՝ Լեգերն ընդուն Ֆրանսիայի վճռում, անդրադառնալով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում առկա է պայմանական վաղաժամկետ ազատման երեք հիմնական մոդել, այն է՝ հայեցողական համակարգ, պարտադիր ազատման համակարգ եւ խառը համակարգ, նշում է, որ հայեցողական համակարգը կիրառելի է անդամ պետությունների մեծամասնությունում: Այս համակարգն ուղղակիորեն կապված է անհատականացման սկզբունքի հետ, քանի որ բոլոյ չի տալիս ավտոմատ ազատումը:

Նման համակարգի կիրառման դեպքում հիմնական խնդիրներից է, որ տարրեր մարմինների որոշումների հնարավոր անհամապատասխանության հարցը լուծում ունենա: Տվյալ հարցին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ հնարավոր անհամաշափելիության խնդիրը կարող է միայն դատական կարգով իր լուծումն ստանալ, եթե նախապես օրենսդրության հստակեցված են այս հարցում տարրեր մարմինների լիազորություններն ու հայեցողության շրջանակները:

Ինչ վերաբերում է հիշատակված գործին, ապա Եվրոպական դատարանը մերժել է դիմողի պահանջը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ «հասարակությանը հարմարվելու ջանքերի»՝ դիմողի կողմից մատնանշված չափանիշի կիրառումը ներպետական իշխանությունների կողմից ներպետական օրենսդրության դրույթների մեկնարանման իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա ստեղծված հանձնաժողովին առնչվող հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումը պետք է լինի, այլ նրա որոշումների՝ օրենսդրությանը

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

համապատասխանելը վերահսկելը: ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի իմաստիվ պահանջն է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին»: Միայն դատարանը կարող է որոշել իրավական ակտը համապատասխանում է օրենքին, թե՝ ոչ: Սակայն դատարանը չի կարող իրացնել օրենքով անկախ հանձնաժողովին վերապահված լիազորությունը: Տվյալ պարագայում պետք է գործի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի օրենսդրական կարգավորման այն տրամադրությունը, որ երբ անկախ հանձնաժողովն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, եւ դատարանը հանգում է այն հետեւությանը, որ հանձնաժողովի հայեցողական լիազորություններն իրականացվել են օրենսդրությանը ոչ համապատասխան, ապա դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է սահմանի հանձնաժողովի պատասխանատվությունը՝ իր որոշումն ընդունել կամ կատարել գործողություն՝ իիմք ունենալով դատարանի իրավական դիրքորոշումը եւ ապահովել կայացվող որոշման իրավաչափությունը՝ այն համապատասխանեցնելով օրենքի պահանջներին:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի վիճարկվող հոդվածում ամրագրված այն դրույթը, որը նախատեսում է պատիժը կրող հիմնարկի վարչակազմի որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, իսկ անկախ հանձնաժողովի որոշումների դատական բողոքարկման հնարավորություն նախատեսում է միայն այն դեպքերում, երբ այդ որոշումը կայացվել է ՀՀ Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ եւ բացառում է նաև այդ որոշման դատական կարգով բողոքարկումը, եթե այն հակասում է օրենքին, ոչ հետեւողական լուծում է եւ չի երաշխավորում միջազգայնորեն ընդունված եւ ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կարգի արմատավորում ՀՀ իրավական համակարգում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

2. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դատական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածներին հակասող եւ անվավեր:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**5 փետրվարի 2008 թվականի  
ՍՊԸ-733**

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՇԽԱՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ  
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԴՎԱԾԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2004  
ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115 ՀՈԴՎԱԾԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի  
ՍԴՈ-733 ՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

ՀՀ սահմանադրական դատարանի 5 փետրվարի 2007թ. ՍԴՈ-733 որոշման կապակցությամբ ունեմ հետևյալ առարկությունը.

Համաձայն չեմ գործի քննության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած այն իրավական դիրքորոշման հետ, համաձայն որի ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասը, այն է. «Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք» վերաբերվում է միայն ներման ինստիտուտին և նշանակված պատիժը մեղմացնելը պետք է հասկանալ սուկ ներման ինստիտուտի տարատեսակ:

Իմ խորհին համոզմամբ Սահմանադրության 20 հոդվածի 4 կետում խոսքը 2 տարբեր ինստիտուտների մասին է՝ ներման և քրեադատավարական:

ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումն այն է, որ դատապարտյալի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքի միակ հասցեատերը ՀՀ Նախագահն է: Ակնհայտ է, որ եթե պատժի մեղմացման ինստիտուտը կլանվեր ներման ինստիտուտի մեջ, ապա ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 17 կետում կնշվեր ոչ միայն ՀՀ Նախագահի դատապարտյալներին ներում շնորհելու լիազորությունը, այլև՝ պատիժը մեղմացնելը: Հետևաբար ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի «պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը» վերաբերվում է միայն պատժից վաղաժամկետ պայմանական ազատմանը: Ուստի Սահմանադրության 20-րդ հոդվածին տրված այն մեկնաբանությունն, ըստ որի Նախագահն է որոշում ոչ միայն ներման, այլև պատժի

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

մեղմման հարցերը ինձ համար ընդունելի չեն: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածով կարգավորվում է ներման ինստիտուտը, ըստ որի ներումն ընդգրկում է պատժից ազատելը, պատժի չկրած մասը փոխարինելը մեղմով:

Եթե «ներում» և «պատժը մեղմացնել» սահմանադրական հասկացությունները մեկնաբանվեն այնպես, որ դատապարտյալի այս իրավունքի իրականացնողը ՀՀ Նախագահն է, ապա կստացվի, որ «ներում» և «պատժը մեղմացնել» հասկացությունները սահմանադրական իմաստներով մեկնաբանվում է ավելի սահմանափակ, քան ՀՀ քրեական օրենսդրությունն է: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքը պատժից ազատվելու կամ մեղմելու երկու եղանակ է նախատեսում՝ Ներումը, որը ՀՀ նախագահի լիազորությունն է, և պատժից ազատելու կամ մեղմելու այլ քրեափական ինստիտուտներ, որոնք, որպես կանոն իրականացվում են դատական իշխանության մարմինների կողմից:

**ՀՀ Սահմանադրության «ներման» և «պատժը մեղմացնելու» սահմանադրական իրավունքների իրականացումը կապել միայն ՀՀ Նախագահի հետ, կնշանակի նման մեկնաբանմամբ խարարել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված իրավական սահմանադրական արժեքային համակարգի առաջնահերթությունները:**

«Պատժը մեղմացնելու խնդրանքը» վերաբերվում է պատժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու քրեադատավարական ինստիտուտին, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածով: Դատավարական օրենսդրության խնդիրն է ապահովել նյութական նորմերի անխափան գործունեությունը, մինչդեռ վիճարկվող դրույթներով խոչընդոտվում է նյութական նորմի իրացումը:

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 22 Հանձնարարականը տալիս է պայմանական վաղաժամկետ ազատելու սահմանումը. «...պայմանական վաղաժամկետ ազատելը նշանակում է դատապարտված բանտարկյալների վաղաժամկետ ազատելը՝ ազատվելուց հետո ընկած ժամանակահատվածի անհատականացման պայմանները ներքո: Այս հասկացությունը չի ներառում **համաներումը կամ ներումը**»:

Այս հանձնարարականը համաձայն Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի և դրա կիրառումը վստահված մարմինների նախադպային իրավունքի, անդամ պետությունների կառավարություններին հանձնարարում է.

1. Իրենց օրենսդրությունում ներառել պայմանական վաղաժամկետ ազատելու մասին նորմեր՝ եթե այդպիսիք դեռ ներառված չեն,

---

## **ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾՔ**

2. Իրենց օրենսդրությունը համաձայնեցնել սույն հանձնարարականի հավելվածում նշված պայմանական վաղաժամկետ ազատելու մասին քաղաքականությանը և պրակտիկային,

3. Միջոցներ ձեռնարկել, որպեսզի պայմանական վաղաժամկետ ազատելու մասին սույն հանձնարարականը տարածվի որքան հնարավոր է լայնորեն:

**ՀՀ ՍՊ անդամ՝**

**Կ. Բալայան**

**02.03.2007թ.**



## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄՐԾՆՈՒՄ

ՀՀ սահմանադրական դատարանը, աշխատակազմը և տեղեկագրի խմբագրական խորհուրդը ջերմորեն շնորհավորում են պարոն Վոլոյյան Հովհաննիսյանին ծննդյան 60 ամյակի առթիվ, ցանկանում քաջառողջություն, մաղթում երջանկություն, արևշատություն, անսպառ ուժ ու եռանդ, հաջողություններ սահմանադրական արդարադատության իրականացման, իրավագիտական, մանկավարժական գործունեության ասպարեզում, իդերի իրականացում և ամենայն բարիք:

**2008 թվականի Հունիսի 15-ին  
լրացավ ՀՀ սահմանադրական  
դատարանի անդամ  
Վոլոյյան Հովհաննիսյանի ծննդյան  
60 ամյակը:**



**Ապրիլի 4-ին** Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Իրանի Էպալամական Հանրապետության արտակազմ և լիազոր դեսպան Սեյյեդ Ալի Սադաջանին:

Նորանշանակ դեսպանի այցը ճանաչողական էր, եւ զրույցը հիմնականում կայացավ Սահմանադրական դատարանի գործունեության, ԻԻՀ Պահապան խորհրդի եւ ՀՀ Սահմանադրական դատարանի գործնական կապերի, երկու երկրների միջեւ հաստատված հարաբերությունների եւ դրանց ամրապնդմանն առնչվող հարցերի շուրջ:



**Ապրիլի 16-ին** Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց ԵԽ Վենետիկի հանձնաժողովի փորձագետ Սիմոնա Գրանատա-Մեմֆինին, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի փորձագետներ Դենիս Պետիտին ու Նիլ Զարմանին՝ ուղեկցությամբ Հայաստանում Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության ներկայացուցչության գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Կապինոսի:

Փորձագետներ Հայաստանում էին գտվում «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում 2008-ի մարտի 17-ին ընդունված փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի եզրակացության առաջարկությունների քննարկումներին մասնակցելու կապակցությամբ:



Պարոն Հարությունյանը, որ Վենետիկի հանձնաժողովի անդամ է, հետեւաբար եւ տեղյակ վերոնշյալ քննարկումների արդյունքներին, հույս հայտնեց, որ ՀՀ ԱԺ-ի հետ փորձագետներն ընդհանուր եզրակացության կզան, եւ օրենդրական փոփոխությունները կկատարվեն ի նպատ Հայաստանում ժողովրդավարական սկզբունքների ամրապնդմանը:

**ՄՊ մամուլի ծառայություն**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կողեզրայի թիվ 37/214 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 588171  
Email: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 20.05.2008 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաշափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՍԴ դեղեկագիրը ՀՀ կառավարությանն  
առընթեր բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
ապրենախտությունների արդյունքների  
դրագրման համար ընդունելի  
պարբերականների ցանկում*